ՀԱՖ 55-116=62

Azg
armenian daily
2013
1 ԱՊՐԻԼ 1998 ՇԱԲԱԹ # 55 (1558)

«Եթե Քոչարյանը հաղթի, նշանակում է աղագան հաղթել է անցյալին»

ԵՐԵՎԱՆ, 31 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Ռոյթեր», «Ֆրանսպրես», DPA, «Ասոշիեյթեդ պրես» գործակալությունները, CNN եւ «Եվրոնյուս» հեռուստաընկերությունները մարտի 31-ին արձանագրել են, որ Հայաստանում նախագահական ընտրություններն անցել են հանդարտ հունով եւ առանց լուրջ միջադեպերի, հաղորդել է «Ազատություն» ռադիոկայանը:

«Թեեւ Ռ. Քոչարյանի ու Կ. Դեմիրճյանի շտաբները մեղադրում էին միմյանց խախտումներ թույլ տալու մեջ, ԵԱՀԿ դիտորդները նշեցին, որ իրենք որեւէ կոպիտ խախտում չեն արձանագրել», հաղորդել է DPA-ն:

«Ասոշիեյթեդ պրեսը» վկայակոչում է Դեմիրճյանի օգնականներին, որոնք գործակալությանը հայտնել են, թե բազմաթիվ խախտումներ են եղել քվեարկության ժամանակ՝ նշելով, որ այդ խախտումները անհնար է ապացուցել, քանի որ մարդիկ վախեցած են: Սակայն Դեմիրճյանի աջակիցները կարծես թե պատրաստ են ընդունել իրենց թեկնածուի պարտությունը, նշում է «Ասոշիեյթեդ պրեսի» թղթակիցը:

«Եթե Քոչարյանի հաղթանակը հաստատվի, ապա դա կնշանակի, որ աղագան հաղթել է անցյալին, ասել է արեւմտյան մի դիվանագետ «Ֆրանսպրեսի» թղթակցին:

ԸՆՏՐԱԿԱՆ

50-օրյա մարաթոնն ավարտվում է Ռոբերտ Քոչարյանի վստահ հաղթանակով

Երեկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատանքային առօրյան առավել լարված էր: Ժամ առ ժամ ստացվում էին ՀՀ նախագահի արտահերթ ընտրությունների երկրորդ փուլի տվյալները: ԿԸՀ նախագահ Խաչատուր Բեգիրջանի հավաստմամբ, ընտրությունների երկրորդ փուլն անհամեմատ կազմակերպված է անցել: Նա նշեց, որ ԿԸՀ-ում չեն դադարել հեռախոսազանգերը եւ հանձնաժողովի անդամները բոլոր լուրջ ահազանգերին արձագանքել են, եղել են տեղամասերում, սակայն պարզվել է, որ մեծամասամբ անհիմն եւ կեղծ են եղել, տեղեկացնելով, որ կան նույնիսկ այդ տեղամասերի նախագահի երկու թեկնածուների վստահված անձանց արձանագրությունները փաստելով, որ խախտումներ չեն եղել: Խոսելով միջազգային դիտորդների հետ ունեցած իր հանդիպումներից, պրն Բեգիրջյանը նշեց՝ որ ընդհանուր առմամբ նրանց եզրակացությունները դրական են: Միջազգային դիտորդները եղել են շատ տեղամասերում, սակայն բացարձակ մեծամասնությամբ խախտումներ չեն նկատվել: Պարզապես որոշ տեղամասերում արձանագրել [illegible] կան նշանակություն չունեն [illegible] բացատրվում երկրորդ փուլում Քոչարյանի ձայների գրեթե կրկնակի առավելությունը Դեմիրճյանի ձայներից, քանի որ առաջին փուլում ձայների այսչափ տարբերություն նկատելի չէր, ԿԸՀ-ի նախագահը նշեց, որ Դեմիրճյանը հաղթել է Լոս Անջելեսում, Վրաստանում, Ուկրաինայում, Բուլղարիայում: Միաժամանակ կարծիք հայտնեց, որ միգուցե առաջին փուլում մյուս թեկնածուներին ձայն տված ընտրողները նախընտրել են Ռ. Քոչարյանին: «Ես չեմ կարծում, որ արտերկրում կեղծումներ լինեն եւ ընդհանրապես կոմունիստական [illegible] կանխավարկած եւ առանց փաստեր ունենալու խոսել կեղծումներից հանցագործություն է», ընդգծեց պրն Բեգիրջանը, ավելացնելով, որ Ռ. Քոչարյանի նախընտրական քարոզարշավը հավանաբար ավելի լավ էր կազմակերպված, որով էլ պայմանավորված էր ձայների առավելությունը:

ԿԸՀ-ի իրավաբանական բաժնի վարիչ Պասվական Հովակիմյանը տեղեկացրեց, որ ստացվել են չորս գրավոր բողոք-դիմումներ, որից մեկը եղել է Ռ. Քոչարյանի նախընտրական շտաբից եւ ուղարկվել է դատախազություն, մյուսները Կարեն Դեմիրճյանի նախընտրական շտաբից են, այդ թվում տեղեկացվում է, որ կան բազմաթիվ բողոք-դիմումներ, որոնք կներկայացվեն երկօրյա ընթացքում: ԿԸՀ-ում բողոք-դիմում է եղել նաեւ համայնքային հանձնաժողովի անդամներից մեկի կողմից, ըստ որի կտրոններում չեն եղել ստորագրություններ եւ հարցը պետք է դրվի համապատասխան քննարկման: Ընդհանուր առմամբ պրն Հովակիմյանը տեղեկացրեց, որ հնչած բոլոր ահազանգերն անպատասխան չեն մնացել, մինչեւ գիշերվա ժամը 5-ը հանձնաժողովի անդամները եղել են տեղամասերում: Սակայն հիմնականում տագնապները հերքվել են:

Եվ այսպես, ՀՀ նախագահի արտահերթ ընտրությունների երկրորդ փուլի արդյունքները երեկվա ժամը 22:00-ի դրությամբ նախնական տվյալներով՝ ընտրողների 1 մլն 980877 թվից մասնակցել են 1 մլն 348473-ը (86 տոկոս), ըստ որի ձայները բաշխվել են՝

Ռոբերտ Քոչարյան 771899 ձայն, 59.15 տոկոս
Կարեն Դեմիրճյան 533022 ձայն, 40.85 տոկոս

Այս տվյալներում ներառված են արարատի, Արմավիրի, Լոռու, Կոտայքի, Շիրակի եւ արտերկրի, բացառությամբ Արգենտինայի, ստացված նախնական տվյալները, իսկ Երեւանից չէին ստացվել Կենտրոն, Էրեբունի, Նոր Նորք համայնքների եւ Արաբկիրի, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց Ձորի եւ Տավուշի մի քանի տեղամասերի տվյալները:

ԱՐԱԲՍ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Ստորագրեր մի չկայացած նիստի շուրջ

ՇԱՄԻՐԱՄ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի եռօրյան, ինչպես նախապես տեղեկացվել էր, պետք է քննարկեր օրենքների նախագծեր, կապված գյուղատնտեսության, հարկային քաղաքականության եւ այլ կարեւոր ոլորտների հետ:

Սակայն նիստը այդպես էլ չկայացավ քվորումի բացակայության պատճառով՝ թողնելով եռօրյայից միայն այսօրվա աշխատանքային օրը: Երեւույթը շատ պարզ բացատրություն ունի՝ ՀՀ նախագահի ընտրությունների թեժ օրերն արդեն երկրորդ անգամ համընկնում են ԱԺ-ի նստաշրջանի աշխատանքների օրացույցի հետ: Իսկ գործադիր իշխանություններում եւ մարզային կառույցներում տարբեր պաշտոններ զբաղեցնող պատգամավորները կգերադասեին իրենց տեղում գտնվել թե՛ բուն ընտրությունների, թե՛ առաջին իսկ հետընտրական օրը՝ թեկուզ եւ ծշված արդյունքներին իրազեկ լինելու համար: Սակայն կեսօրվա կողմը պատգամավոր Ջեմմա Անանյանի ԱԺ-ում երեւալը վկայում է, որ եթե հեռու մարզի պատգամավորը հասցրել էր գալ, ապա երեւանցին կամ մոտակա բնակավայրի ներկայացուցիչներն ի վիճակի էին անպայման առպահովել իրենց ներկայությունը: [illegible] ների փաստացի տարալմանը: Չէ որ ինչքան էլ գրավիչ է «Հնգամյակը չորս տարում» կարգախոսը, բոլորս էլ հասկանում ենք, որ ժամկետը առպահովվում է որակի հաշվին:

Թեկուզ այս հանգամանքը հուշում է, որ պարզորոշ բացատրություն տալ ԱԺ-ի վերջին շրջանի պասիվությանը չի կարելի:

Տես էջ 2

Կարեն Դեմիրճյանը քաղաքական պայքարից դուրս չի գա

Նրա շտաբը չի ընդունում արդյունքները

ԵՐԵՎԱՆ, 31 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մարտի 31-ին, նախագահական արտահերթ ընտրությանը հաջորդող օրը, Կարեն Դեմիրճյանի նախընտրական շտաբում հիմնականում վերլուծվում էին ընտրությունը եւ նրա արդյունքները: Ինչպես հայտնեց շտաբի ժամուլի պատասխանատու Արմեն Վալեսյանը, դա նախ իրենց համար է կարեւոր, որպեսզի պարզ լինի, թե խորհրդային իմաստով ինչ է տեղի ունեցել ներկա քաղաքական իրավիճակի հնարավոր զարգացումների տեսակետից:

Միաժամանակ, ըստ Ա. Վալեսյանի, շարունակվում է բողոքների հոսքը դեպի շտաբ: Դրանք ուսումնասիրվում են, եւ բողոքների այն մասը, որ նորմալ ձեւակերպում ունի, իրավաբանական տեսքի կբերվի, որպեսզի համապատասխան մարմիններին դիմելու հնարավորություն լինի: Եղած բողոքների թվերի մասին Վալեսյանը չհայտնեց, քանի որ դրանց հոսքը շարունակվում էր: Իսկ վերլուծելուց հետո միայն կարելի է ասել, թե բողոքները որքան կարող են ազդել ընտրության արդյունքների վրա եւ ինչ քայլեր կարելի է ձեռնարկել: Նախընտրական շտաբը առաջիկայում եւս շարունակելու է վերը նշված գործունեությամբ զբաղվել:

Կարեն Դեմիրճյանի ինքնազգացողությունը նորմալ է, եւ ըստ Ա. Վալեսյանի, որպես լուրջ քաղաքական գործիչ, նա եւս պետք է վերլուծի քաղաքական այս լուրջ փոփոխությունները:

«Քանի որ անկախ նախագահական ընտրության վերջնական արդյունքներից, արդեն պարզ է, որ Կարեն Դեմիրճյանին զգալի թվով ընտրողներ են իրենց ձայները տվել, սա արդեն լուրջ հիմքեր է ստեղծում նրա հետագա քաղաքական գործունեության համար», նշեց Արմեն Վալեսյանը:

Իսկ թե քաղաքական հետագա գործունեությունն ինչ ձեւեր կամ կոնկրետ մեխանիզմներ կունենա, ցույց կտա ժամանակը: Բայց փաստ է, ավելացրեց Ա. Վալեսյանը, որ «մարտի 30-ով կյանքը չի ավարտվում, իսկ երկրի առջեւ ծառացած պրոբլեմները չպակասեցին, գուցե նաեւ ավելացան»:

Երեկ երեկոյան ռուսական HTB հեռուստակայանը հաղորդեց, որ Կարեն Դեմիրճյանի շտաբը չի ընդունում ընտրության արդյունքը եւ վիճարկելու է այն:

Գարեգին Ա. «Ալիեւի հրամանագիրը պատմության ամենամեծ կեղծիքն է»

ԵՐԵՎԱՆ, 31 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Լրատվական միջոցների հաղորդումների համաձայն, Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը մարտի 26-ին ստորագրել է մի հրամանագիր, որով մարտի 31-ը հայտարարվում է ադրբեջանցիների ցեղասպանության օր: Արմենպրեսի թղթակիցը մարտի 31-ին մեկնաբանության խնդրանքով դիմեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսին: Վեհափառ Հայրապետը նախ չհավատաց այդ լուրին, ապա ասաց.

– Այդ լուրն իմ աչքին չի զարնել, ես այդ մասին որեւէ հստակ բանաձեւում չեմ կարդացել, բայց, հիմնվելով ձեր խոսքի վրա, կարող եմ ասել հետեւյալը: Եթե Ալիեւը 31 մարտը նկատում է ցեղասպանության օր, հայի կողմից գործադրված ցեղասպանություն ազերբեջանցիների դեմ, դա պատմության ամենամեծ կեղծիքն է, եւ ավելին պիտի ասեմ՝ ծիծաղելի երեւույթ է:

Դա պատմական մի ֆարս է խորհրդի մեջ, եւ որեւէ տեղ ոչ թե արձագանք կգտնի, այլ ընդվզում կառաջացնի, որովհետեւ պատմականորեն անհիմն եւ այսօրվա մեր տարածաշրջանում խաղաղության եւ արդարության ձգտող մեր ընդհանուր քաղաքականության մեջ խանգարիչ մի արտահայտություն է:

Դուման դեմ է Կիրիենկոյի թեկնածությանը

ՄՈՍԿՎԱ, 31 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի Պետական դուման չորեքշաբթի օրը խորհրդարանականների առաջարկած «կլոր սեղանի» ժամանակ կինարկի կառավարության ղեկավարի պաշտոնի համար Սերգեյ Կիրիենկոյի թեկնածությունը հետ վերցնելու մասին նախագահ Ելցինին հղած դիմումը: Համապատասխան որոշման նախագիծը, որը չորեքշաբթի օրը կներկայացվի պալատի լիագումար նիստին, այսօր սկզբունքորեն հավանության է արժանացել Դումայի խորհրդի կողմից: Ինչպես հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, ստորին պալատի «ՌԴ կառավարության կազմավորման հետ կապված միջոցառումների մասին» որոշման նախագիծը պաշտպանել են խորհրդարանական բոլոր խմբակցություններն ու խմբերը՝ բացառությամբ Ռուսաստանի լիբերալ-ժողովրդավարական կուսակցության առաջնորդ Վլադիմիր Ժիրինովսկու:

Հասանովը սպառնում է խախտել լռությունը

ԲԱՔՈՒ, 31 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես հաղորդում է Ադրբեջանի «525» թերթը, հանրապետության արտաքին գործերի նախկին նախարար Հասան Հասանովի դեմ քրեական գործ է հարուցվել: Հասանովը պատճառից ազատվել էր «Եվրոպա» հյուրանոցի կառուցման հետ կապված չարաշահումների համար: Քրեական գործ հարուցելու մասին թերթի խմբագրությանը հաղորդել է Բաքվի դատախազության մի պատգամավոր, որը չի ցանկացել նշել իր անունը: Թերթը դիմել է Հասան Հասանովին՝ պարզելու, թե ինչ վերաբերմունք „ունի նա իր դեմ հարուցված քրեական գործի նկատմամբ: Հասանովը հրաժարվել է մեկնաբանություններից, սակայն ասել է, որ ուշադիր հետեւում է գործի ընթացքին: Նա նաեւ հրաժարվել է պատասխանել այն հարցին, թե ինչու է լռություն պահպանում, բայց ընդսմին նշել է, որ այդ գործը բոլորովին այլ նպատակ ունի: «Եթե իմ դեմ քրեական գործ հարուցած մարդիկ կարծում են, որ ես շարունակելու եմ լռել, ապա նրանք սխալվում են», ավելացրել է նա:

486-98 86/5ահ
digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Ստորումներ մի չկայացած նիստի շուրջ

Սկիզբը էջ 1

Եվ ոչ միայն երկփուլային նախագահական ընտրություններում է պետք փնտրել պատգամավորների պաղ վերաբերմունքի պատճառն իրենց սուրբ պարտականությունների նկատմամբ: Երեւի թե մեխն այն ներքաղաքական իրավիճակն է, որն սկսվեց Տեր-Պետրոսյանի հրաժարականից: Եվ եթե գործադիր իշխանությունների ուժերի կամ հասարակության տեղը, դերը, սերը եւ ատելությունը նախագահական ընտրություններով կարծես թե պարզվեցին, ԱԺ-ն նոր ներքաղաքական դաշտում մնաց անորոշ քաղաքական մի դիրքում, որը չհստակեցրեց ոչ ուժերի նոր տեղաբաշխումը, ոչ նոր նշանակումները, ինչը երեւի թե կարելի է որակել որպես ներպառլամենտական ճգնաժամ:

Զարմանալին էլ այն է, որ ճգնաժամը չունի ոչ մի արտահին դրդապատճառ: Նախագահի երկու թեկնածուներից որեւէ մեկը չի ընդգծվել Ազգային ժողովը գրելու անհամբերությամբ: Եվ քանի որ նախնական տվյալներով ակնհայտ առաջնությունն ընտրություններում Ռոբերտ Քոչարյանինն է, այժմ ընդգծում է հենց նրա դիրքորոշումը: ՁԼՄ-ների համար հարցադրումներին նա տվել է մի պատասխան, որ ԱԺ-ն դեռ անելիքներ ունի եւ խոսել նրա լուծարման մասին վաղաժամ է:

Այդ կողմից, ԱԺ-ի նոր ղեկավարությունը կարծես թե արտահայտում է ուժերի նոր տեղաբաշխումը, ունենալով որոշակի բոլոր կողմերը և ոչ օտարացած, կենտրոնածիգ եւ կենտրոնամետ, խոհեմ կեցվածքի տեր Խոսրով Հարությունյանին:

Եզրակացնեմ, որ ճգնաժամի բուն դրդապատճառը հանդիսացան հենց իրենք պատգամավորները: Եվ կարելի է ասել, բոլոր բեւեռներով հանդերձ: Արմատական ընդդիմությունը ի դեմս ԱԺՄ-ի, Հայկոմկուսի կամ ԻՄ-ի պարտվելով նախագահական ընտրություններում, պարտադրված է վերանայել իր ռազմավարությունն ու մարտավարությունը թե ներքաղաքական ասպարեզներում, թե ԱԺ-ում: «Երկրապահ» պատգամավորական խումբն իր հեգեմոն դերը կարծես թե դժվարությամբ է ընկալում, ունենալով շարքերում նորաթուխ երկրապահներ, որոնք արդեն «Հանրապետական» չեն, բայց «Երկրապահ» էլ չեն դարձել՝ տառապելով իրենց նոր տեղն ու դերը զգնելու բարդույթով: «Շամիրամը» տառապում է քաղաքական անորոշությունից: «Հայրենիքը» ընտրություններից հետո թեեւ դիրքերը մոտեցրեց «Հանրապետություն» միավորմանը եւ ԱԺՄ-ին դառնալով ոչ թե քաղաքական, այլ Ռոբերտ Քոչարյանի անձը եւ մարտավարությունը չհանդուրժող ընդդիմություն, սակայն խոսել նոր դիրքորոշումներից եւ ներպառլամենտական քաղաքական դաշինքներից դեռ վաղ է:

Այնուամենայնիվ, հեղհեղուկ այս վիճակը չի կարող նպաստել օրենսդրական գործընթացի արդյունավետությանը: Իսկ եթե հաշվի առնենք, որ պատգամավորներից շատերը պարտադրված փոփոխություններից մտահոգված են տեղ որոնելով նոր արեւի տակ, ապա կհասկանանք, թե ԱԺ-ին որքան դժվար է վերադառնալ բնականոն աշխատանքի:

Եզրակացությունները, ի դեպ, միայն իմ մտորումների արդյունքը չեն: Այսպես թե այնպես դա են վկայում իմ զրույցները հենց իրենց պատգամավորների հետ: Այսպես օրինակ, իմ հարցին, թե բացառո՞ւմ է արդյոք ԱԺ-ի նախագահը նոր քաղաքական միասնությունների եւ դիրքորոշումների դրսեւորումը, մասնավորապես «Հայրենիքի» կամ «Հանրապետություն» խմբակցության կողմից, խոսքով Հարությունյանը պատասխանեց՝ ոչ միայն չի բացառում, այլեւ կցանկանար, որ նրանք իրոք նոր քաղաքական դաշտում իրենց տեղը գտնեն: Եվ արժանի տեղը, քանի որ ԱԺ նախագահի կարծիքով, բոլոր քաղաքական ուժերն արեւի տակ պետք է իրենց տեղն ունենան:

Եվ ինչքան արագ որոշվի այդ տեղը, այնքան փոքր կորուստներ կլինեն օրինաստեղծ գործընթացի համար: Քանի որ, ըստ Խոսրով Հարությունյանի, ԱԺ-ն առնվազն մի քանի ամսվա գործ ունի, եւ ՁԼՄ-ների այդ լացը ԱԺ-ի վաղաժամ վախճանի կարտակցությամբ, ուղղակի անընդունելի է, մինչ պատգամավորների խուճապային տրամադրությունները պայմանավորվում են մեր լրագրողների ժխտողական դիրքով:

ԱԺ-ի մասին նույն կարծիքին է ՀՀՇ խմբակցության ղեկավար Վանո Սիրադեղյանը: Գտնելով, որ «Հանրապետություն» բլոկը դավանելով ազատական տնտեսության գաղափարները, իր ներուժով եւ ծայներով ի վիճակի է տանելու ազատականության գիծը ԱԺ-ում, ինչը գլխավոր ուղղվածությամբ ներդաշնակ է նոր իշխանության նպատակներին՝ շարունակել բարեփոխումների գործընթացը, Սիրադեղյանը կողմ չէ ԱԺ-ի շուտափույթ լուծարմանը: Առնվազն մեկ տարի այս կազմը կարող է աշխատել, քանի որ, ըստ Սիրադեղյանի, արդեն իսկ պատգամավորական կազմը «սոցիալացված է» ճիշտ այնպես, ինչպես «սոցիալացված է» հասարակությունը: Մյուս ԱԺ-ի կազմը, ըստ Սիրադեղյանի, կլինի «սոցիալացված» իր իսկ բնույթով, քանի որ պատգամավորների մի պատկառելի մասը կկազմեն Հայկոմկուսի եւ ՀՅԴ-ի ներկայացուցիչները:

Որպես օրինակ բերվեց իր իսկ պատգամավորական ընտրությունները Հրազդան քաղաքում: Այդ միջանկյալ պատգամավորական ընտրություններում մյուս թեկնածուն Հայկոմկուսի ներկայացուցիչը հավաքել էր 37 տոկոս ձայներ:

Վանո Սիրադեղյանը նոր քաղաքական խմբորումների պատճառ ԱԺ-ում չի տեսնում, քանի որ դրանց անհրաժեշտությունը չկա:

Իրավիճակը չբնորոշելով որպես ճգնաժամային նա, այնուամենայնիվ, գտնում է, որ ներքաղաքական ինչ-որ կողմնորոշում՝ ուղղակի տեխնիկապես, համենայն դեպս, անհրաժեշտ էր:

Օրենսդրական անգործությունն էլ է պարզ բացատրվում: Մարդիկ զբաղված են ընտրություններով, եւ դա ժամանակավոր երեւույթ է: Սիրադեղյանը գտնում է նաեւ, որ թե Քոչարյանը, թե Դեմիրճյանը պատրաստ չեն նոր ԱԺ-ի ընտրությունների եւ հենց իրենց ձեռնտու չէ ԱԺ-ի լուծարումը մոտ ժամանակներս:

Իմիջիայլոց, այս կամ այն հանգամանքներով հիմնավորված, ԱԺ-ի լուծարմանը դեմ էին բոլոր իմ զրուցակից պատգամավորները: Սակայն մենք եւ նրանց ընտրազանգվածները չենք կարող երկար սպասել խուճապի ավարտին: Առջեւում ընտրական օրենսգրքի եւ մյուս կարեւոր օրենքների ընդունումն է: Իսկ արեւի տակ տեղ կարելի է փնտրել անվերջ:

ՄԵԼՍԻԼԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԻՐԻԱ

Բնական աղետ հայաբնակ Կարադուրան գյուղում

Մարտի 24 լույս 25-ի գիշերը բնական աղետը հարվածել է Սիրիայի հյուսիսարեւմտյան հայաբնակ Քեսաբի շրջանի Կարադուրան գյուղին: Հողը բառացիորեն «կուլ է տվել» գյուղի կենտրոնական՝ Գեոկչյան, Սաղոնճյան, մասամբ նաեւ՝ Թիթիզյան թաղերը: Հողի երեսից անհետացել է թաղերը շրջանի մյուս բնակավայրերին կապող միակ ճանապարհը: Աղետահար բնակչությունը ոտով հավասարվել է Կարադուրանի փոքրիկ զոհեր չկան, սակայն նյութական վնասները շատ մեծ են: Մարդիկ ամբողջովին կորցրել են տասնամյակների աշխատանքի արդյունքները:

Սա առաջին բնական աղետը չէ, որը հարվածել է Կարադուրան գյուղին: Միայն այս դարում տեղի են ունեցել հողի երկու մեծ սահանքներ: 1910 թ.-ին Տյունակ լեռից իջած հողի սահանքն ավերել է Թիթիզյան թաղը եւ բառացիորեն թաղել հովիվ ճանո Թիթիզյանին ու նրա հոտը. այդ



ծովածոցում (թուրք-սիրիական սահմանի ծովային կեսը), որտեղից Սիրիայի բանակի ուղղաթիռներով տեղափոխվել է Հարավային Տյունակ լեռից այն կողմ գտնվող Բասիթի ծովեզերքը: Հիմնովին ավերվել են նաեւ Հայ առաքելական եւ Հայ ավետարանական Ս. Աստվածածին համանուն եկեղեցիները:

Դեմքի վայր են փութացել պետական բարձրաստիճան պաշտոնատարներ մայրաքաղաք Դամասկոսից եւ նահանգային կենտրոն Լաթաքիայից: Շրջան են տեղափոխվել բանակային ստորաբաժանումներ, որոնք օժանդակում են աղետյալներին:

Ըստ վերջին տվյալների՝ մարդկային պատճառով էլ աղետը կոչվել է «Ճանոյի սահանք» (բարբառով՝ «Ճանիկուն սելը»): 1942 թ.-ին հողը «լափել է» գյուղի Ղազարյան թաղը: Աղետյալների վերաշնավորմանը օժանդակել են Կիլիկիո կաթողիկոսությունը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը եւ այլ կազմակերպություններ:

Հարկավոր է, որ վերջին աղետյալները եւս արժանանան համազգային օժանդակության:

Աղետի տարածքում է գտնվում նաեւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի ապուպապական կալվածքը:

ԳԵՎՈՐԳ ՅԱՇՔԾՅԱՆ

«Այս ընտրությունները շատ ավելի ժողովրդավարական էին, քան 96-ինը»

ԵՐԵՎԱՆ, 31 ՄԱՐՏ, ՍՐՄԵՆՊՐԵՍ: Մարտի 31-ին ՀՀ արտգործնախարարի պաշտոնակատար Վարդան Օսկանյանն ընդունեց ՄԱԿ-ի քաղաքական հարցերի բաժանմունքի քաղաքական խորհրդատու Վլադիմիր Գորյաեւին: Ինչպես հայտնի է, պրն. Գորյաեւը Հայաստան է ժամանել նախագահական ընտրությունների ընթացքում դրան նախորդող եւ հաջորդող ժամանակաշրջանի մասին քաղաքական իրադրությունն ուսումնասիրելու եւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանին զեկույց ներկայացնելու նպատակով: Պրն Գորյաեւը Հայաստանում գտնվելու ընթացքում հանդիպել է ՀՀ կառավարության մի շարք պաշտոնյաների ու նախագահի թեկնածուների հետ:

Ինչպես հայտնեցին ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների դեպարտամենտից, ՄԱԿ-ի կենտրոնատեղի վերադառնալուց առաջ պրն Գորյաեւը կրկին հանդիպել է պրն Օսկանյանի հետ, ներկայացնելով իր հանդիպումների ու դիտարկումների արդյունքում ստացած տպավորությունները նախագահական ընտրությունների, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի վերաբերյալ:

Պրն Գորյաեւը նշել է, որ 1998 թ. ընտրությունները ակնառու առաջընթաց են 1996 թ. ընտրությունների համեմատ եւ շատ ավելի ժողովրդավարական, թափանցելի ու մաքուր էին: Նա ավելացրել է նաեւ, որ հնարավոր եղավ առաջին փուլում տեղ գտած որոշակի խախտումները ճշտել եւ թույլ չտալ դրանց կրկնությունը երկրորդ փուլում:

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանում ՄԱԿ-ի համակարգող տիկին Կաթիցա Չեկալովիչը եւ ԱԳՆ ՄԱԿ-ի բաժնի վարիչ Վահրամ Կաժոյանը:

ՃԵՊԱԶՐՈՒՅՑ

Նոր հասարակական կազմակերպություն՝ «Երեւանի ավագանիներ»

Վերջերս տեղի ունեցավ «Երեւան քաղաքի ավագանիներ» հասարակական կազմակերպության հիմնադիր ժողովը, որի վարչության նախագահ ընտրվեց մանկավարժության հանրապետական ինստիտուտի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ռոբերտ Գաբրիելյանը: Մեր ճեպազրույցը նորաստեղծ հասարակական կազմակերպության նախագահի հետ խիստ գործնական էր եւ պարզաբանումներ ստանալու նպատակ էր հետապնդում:

– Պրն Գաբրիելյան, խնդրեմ, համառոտ ներկայացրեք կազմակերպությունը:

– Մեր հասարակական կազմակերպությունը կամավոր միավորում է, որ հիմնված է տարբեր անձանց ոչ թե նյութական եւ այլ պահանջմունքներ բավարարելու, այլ հոգեւոր շահերի ընդհանրության վրա: Հետեւաբար, մեր կազմակերպությունն իր գործունեությունը կիրականացնի օրինականության, կամավորության, իրավահավասարության եւ հրապարակայնության սկզբունքներին համապատասխան: Կազմակերպության անդամների թիվը 70-ից ավելի է, բայց համակիրների թիվը շատ է եւ առաջիկայում կհամալրվի:

– Որո՞նք են կազմակերպության հիմնական նպատակները եւ խնդիրները:

– Համոզված եմ, որ մեզ կհաջողվի համակարգել Երեւան քաղաքի ավագանիների գործունեությունը, ծանոթանալ միմյանց աշխատանքներին եւ ընդօրինակել լավը, նորը: ԱԺ ներկայացնել առաջարկություններ «Տեղական ինքնակառավարման մասին» եւ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու նպատակով, համագործակցել պետական տարբեր մարմինների (մաքսաքաղաքական, մարզքաղաքական) եւ հասարակական այլ կազմակերպությունների հետ: Մենք կկազմակերպենք սեմինարներ, գիտաժողովներ, կիրավիրենք մասնագետների, որոնք կկատարեն սոցիոլոգիական եւ գիտական ուսումնասիրություններ:

– Որո՞նք են կազմակերպության միջոցների աղբյուրները:

– Դրանք հիմնականում կազմակերպության անդամների մուտքավճարներն են, անդամավճարները, բանկային հիմնարկներից կատարվող դրամական, նյութական ներդրումները, վարկատուներից ստացված վարկերը, բարեգործական, քաղաքացիների եւ այլ կազմակերպությունների ներդրումները, կազմակերպության դուստր ձեռնարկությունների կողմից փոխանցված գումարները:

ՄԵԼՍԻԼԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Մինչեւ ապրիլի կեսերը լույս կտեսնի նոր «Երկիր»-ը

ԵՐԵՎԱՆ, 31 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մինչեւ ապրիլի կեսերը լույս կտեսնի ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի պատասխանաբեր՝ «Երկիր» օրաթերթը: Ըստ օրաթերթի գլխավոր խմբագիր Մուշեղ Միքայելյանի, նոր «Երկիր»-ը, ճիշտ է, կդիմադրի ավանդույթներն ու սկզբունքները նախկին «Երկիր»-ի, որն ունի կենսագրություն եւ որը չդադարեցրեց է ուրանալ, սակայն, առաջին հերթին պետք է լինի արհեստավարժ, ազատ թերթ: «Երկիր»-ի փակվելուց հետո անցել են 3-ից ավելի տարիներ, փոխվել է քաղաքական իրավիճակը, մամուլի չափանիշները, ճաշակը: Հետեւաբար, ըստ նոր խմբագրի, «Երկիր»-ը կարծագանքի Հայաստանի այսօրվա խնդիրներին: Թերթն առայժմ լույս կտեսնի ոչ մեծ տպաքանակով: «Երկիր»-ը փակվել էր 1994 թ.-ի դեկտեմբերին: Հայաստանում ՀՅԴաշնակցության կասեցման մասին ՀՀ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրամանագրից հետո:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեֆոն 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարվածք
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ԸՆՏՐԱԿԱՆ

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

Ընտրությունների լուսաբանումն ընդհանուր առմամբ՝ գոհացուցիչ

Արտահերթ նախագահական ընտրությունների երկրորդ փուլին առավելագույնս արագ արձագանքելով երեկ ժուռնալիստի տանը լրագրողներին հանդիպեցին Լրատվամիջոցների եվրոպական ինստիտուտի դիտարկման և աջակցության առաքելության «Լրատվամիջոցներ և ժողովրդավարություն» ծրագրի ղեկավար Դյուբեն Ռելիչը (Գերմանիա), «Ազատություն» ռադիոկայանի տարածաշրջանային փորձագետ Էլիզաբեթ Ֆոյերը (Չեխիա), ինստիտուտի հայաստանյան ներկայացուցիչ Կարեն Մարտիրոսյանը, դիտարկման (մոնիտորինգի) խմբի ղեկավար Մարկ Գրիգորյանը: Պրն Ռելիչը ներկայացրեց ինստիտուտի հետ ատելիների, քննարկումների և հարցազրույցների միջոցով, մինչ Կարեն Դեմիրճյանի շտաբը լրատվամիջոցների նկատմամբ սակավախոս էր, անգամ դժկամ: Այդ իմաստով գնահատելի համարվեցին համամասնությունները ղեկավարելու պետական լրատվամիջոցների ջանքերը, թեև ասվեց, որ խմբագրական վերլուծությունների նժարն, այնուամենայնիվ, թեքվել է Ռոբերտ Քոչարյանի կողմը (ազգային հեռուստատեսության առաջին ծրագրի դարաշրջանում 42.15 տոկոս Կարեն Դեմիրճյանին նվիրված խմբագրականների 16.61 տոկոսի դիմաց, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի դեպքում 53.32 տոկոս Քոչարյանի օգտին, ի հակակշիռ Դեմիրճյանի 37.79 տոկոսի):

Լրատվամիջոցների համակրանքը ոչ միայն բանական, այլև որակական առումով: Օրինակ, ազգային ռադիոյի Կարեն Դեմիրճյանին հասցեագրված 460 հրամաններից 338-ն ունեցել են չեզոք, 64-ը բացասական, 58-ը դրական երանգավորում, մինչ Ռոբերտ Քոչարյանը «հիշատակվել է» 570 անգամ 416 չեզոք, 130 դրական և 31 բացասական հրամաններով: «Հայաստանի Հանրապետությունը» գրեթե համաչափ է անդրադարձել երկու թեկնածուներին (649 Կարեն Դեմիրճյանին, 693-ը Ռոբերտ Քոչարյանին), սակայն Կարեն Դեմիրճյանին վերաբերող 301 բացասական և 74 դրական արձագանքները «հակակշռվել են» Քոչարյանին բաժին ընկած 21 բացասական և 370 դրական անդրադարձերով: Պետական և մասնավոր հեռուստակայանները փորձել են հեռուստաբանավեճերի հրավիրել երկու թեկնածուներին, ինչը, սակայն, խոչընդոտվել է Կարեն Դեմիրճյանի կողմից քննարկումներին անհրաժեշտ նախապայմաններ ներկայացնելով:

Լիզ Ֆոյերն արձանագրեց՝ ընտրությունների լուսաբանման երեք բացասական միտում: Նախագահի երկու թեկնածուների կամ նրանց աջակիցների կողմից թույլ տված բարոյական նորմերի որոշ խախտումներ բառացիորեն արացոլվել են մի շարք լրատվամիջոցներում ներկայացվելով իբրև փաստ, մինչդեռ կարող էին կարծիք լինել: Ատելիները, հատկապես առաջին փուլում, հաճախ վերարտադրվել են ընտրողաբար: Կարևոր, ելակետային մեկնակետերը շրջանցվել են, «փոխարինվելով» անկարևոր մանրամասներով, և փաստորեն մոլորեցրել ընթերցողին: Երրորդ թերացումը վերաբերում էր ազգային հեռուստատեսությանը: Վերջինիս տնօրենն, ըստ բանախոսի, համաձայնել է, որ վճարովի և անվճար եթերաժամերի միջև բացակայել է ուստայ սառասապատումը՝ դրանց ընտրելիության անբավարար վերահսկողությունն էր հատկապես երկրորդ փուլի հեռուստաեթերի նկատմամբ:

Սակայն վերոհիշյալ թերացումները, որ, ըստ Լիզ Ֆոյերի, «ժամանակային ճնշման» (գրության), երբեմն անբավարար արհեստավարժության արդյունք էին, չեն փոխում ընդհանուր առմամբ լավ տպավորությունը ընտրությունների լուսաբանման ընթացքից: Հայաստանյան լրատվամիջոցների կատարելագործմանը, նրա կարծիքով, կարող է նպաստել մամուլի և հեռուստատեսության մասին նոր օրենքդրության ընդունումը մամուլին վերադասիվելիք առավել լայն ինքնավարությամբ, և ընտրությունների մասին նոր օրենքի ստեղծումը, որը լրատվամիջոցներին զերծ կդահի հնարավոր թյուրիմացություններից:

Առաջիկայում առաքելության զեկուցագիրը կհրապարակի հայերեն առանձին լրատվամիջոցների վերաբերյալ դիտարկումներով:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ



Նախնական արդյունքներով Լոռիում գերակշռում են Ռոբերտ Քոչարյանի ձայները

Ինչպես տեղեկացանք Լոռու մարզային ընտրական հանձնաժողովի նախագահ Տ. Քոչարյանից, ՀՀ նախագահական ընտրությունների երկրորդ փուլը մարզում անցել է գրեթե առանց խախտումների: Համենայն դեպս երեկվա դրությամբ տեղամասերից մարզային հանձնաժողովին որևէ գրավոր բողոք չեն ներկայացրել: Միայն ընտրողների կողմից եղել են մի քանի հեռախոսազանգեր, որոնցում նշված փաստերը ստուգումներից հետո չէին հաստատվել: Լոռու մարզում ըստ նախնական տվյալների 226181 ընտրողից ընտրությանը մասնակցել է 142460-ը (65.23 տոկոս):

Վանաձորում ընտրություններին մասնակցել է 99443 ընտրողների 54.77 տոկոսը՝ 54460 մարդ: Մարզի խոշոր քաղաքներում Ռ. Քոչարյանի ձայները գերակշռում են, բացառությամբ Տաշիրի, որ Կարեն Դեմիրճյանի ձայները կազմել են 66.9 տոկոս:

Ըստ նախնական տվյալների, Լոռու մարզում, Վանաձորում, Ստեփանավանում, Սպիտակում, Ալավերդիում և Տաշիրում ձայները բաշխվել են հետևյալ կերպ.

	Կ. Դեմիրճյան	Ռ. Քոչարյան
Լոռի	64057 (44.96 տոկոս)	78403 (55.04 տոկոս)
Վանաձոր	26500 (48.7 տոկոս)	27955 (51.3 տոկոս)
Ստեփանավան	3880 (43 տոկոս)	5136 (57 տոկոս)
Սպիտակ	2200 (27.5 տոկոս)	5335 (72.5 տոկոս)
Ալավերդի	4371 (44.65 տոկոս)	5419 (55.35 տոկոս)
Տաշիր	2963 (66.9 տոկոս)	1464 (33.1 տոկոս)

Մ. ՄԵԿՈՅԱՆ
Վանաձոր

ԵՐԳԻԾՆԵՐ

Եթե Անդրանիկը մասնակցեր ընտրություններին

Շապինգարահիսարցի Ա. Օգանյանն իրավունք չունի մասնակցելու ՀՀ նախագահի արտահերթ ընտրություններին: Այսպիսի հայտարարությամբ հանդես եկավ «Ազգային անհեթեթություն» կուսակցության ղեկավար Վիգեն Երկերեյանը: Նրա խոսքերով Շապինգարահիսարցիները, ինչպես նաև զարաքաղցիները, մշեցիները, սասունցիները, էրզրումցիները, զեյթունցիները և այլ տեսակի հայեր 7 տարի գոյություն ունեցող ՀՀ-ում 10 տարվա քաղաքացիություն չունեն: Ուստիև ԿԸՀ-ն չպետք է զրանցի զորավար Անդրանիկի թեկնածությունը:

Պրն Երկերեյանը նաև նշեց, որ ազգային տնտեսության դարագլուխներից մեկը՝ Անդրանիկը, ընդհանրապես առաջադրվելու բարոյական իրավունք չունի այն դարզ դաշճառով, որ զորավարը դղյակներ է կառուցել ՀՀ-ում, ԱՄՆ Ֆրեզնո և Բուլղարիայի Վառնա քաղաքներում: «Հայաստանի ազատության համար շուրջ 20-ամյա նրա դայքարը դեռ հիմք չէ նրա նախագահ ընտրվելու համար», վերջում նշեց Երկերեյանը:

2010 թ.

Ադրբեջանի նախագահ Սելջուկ Օսմանովը վրդովմունքով մերժեց ԼՂՀ առաջարկությունը՝ միջնորդի դեր ստանձնել Ադրբեջանի և Դաշտային Ղարաբաղի Հանրապետության հակամարտության ընթացքում:

«ԼՂՀ-ն հակամարտության շահագրգռված կողմ է և զենք է մատակարարում Դաշտային Ղարաբաղին: Մերժում ենք նաև ԴՂՀ ղեկավար Վահան Հովհաննիսյանի առաջարկը լայն ինքնավարություն տրամադրել Ադրբեջանին Ղարաբաղի կազմում», նշեց Օսմանովը:

Ինչալլա

Երեկ Բաքվում ավարտվեց «Միս տարածքային ամբողջականություն-98» համաադրբեջանական մրցույթը: Ինչպես «Ազգի» թղթակցին տեղեկացրին ԼՂՀ տեղեկության վարչությունից, ժյուրիի անդամների միահամուռ որոշմամբ հաղթող ճանաչվեց Հայաստանի «Նոր շեղում» կուսակցության առաջնորդ Աշոտ Բլեյանը: «Ինչո՞ւ տղամարդ եմ, ինչո՞ւ հայ», լրագրողների զարմացած հարցին ի պատասխան ժյուրիի նախագահ Վաֆա Գուլուզադեն նշեց, որ Բաքվի ոչ մի միս և միսիս այնքան կրքով չի տվող Ադրբեջանի ամբողջականության գաղափարին, ինչպես Աշոտ Բլեյանը: Վ. Ա.

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Քննարկվում է ԼՂՀ հողային օրենսգիրքը

Մարտի 30-ին կայացավ ԼՂՀ ԱԺ հերթական նիստը, որը վարեց խորհրդարանի խոսնակ Օլեգ Եսայանը: Նիստի մասնակիցները նախ և առաջ հավանություն տվեցին ԼՂՀ սեփականության մասին օրենքում տեսեսական հարցերի հանձնաժողովի անդամ Կարեն Ղարիբյանի ներկայացրած առաջարկություններին ու լրացումներին:

Եթե օրակարգի առաջին հարցն առանձնապես տարակարծության տեղիք չտվեց, ապա հողի սեփականաշնորհման մասին օրակարգի հաջորդ հարցը անցավ բուռն քննարկումների մթնոլորտում: Տարակարծության տեղիք էր տվել հատկապես օրինագծի II հատվածը, որը վերաբերում էր սեփականաշնորհման սուբյեկտներին: Նիստում դարզաբանումներով հանդես եկավ գյուղնախարար Արմո Ծատուրյանը: Տեսական քննարկումից հետո ի վերջո որոշվեց 1 ընթերցմամբ ընդունել օրինագիծը: Պատգամավորները ձեռնամուխ եղան նաև ԼՂՀ հողային օրենսգրքի հոդված առ հոդված քննարկմանը: Հանգամանալի քննարկումից հետ ԱԺ-ն ընդունեց օրինագիծը: Նիստում քննարկվեցին նաև մի շարք կազմակերպչական հարցեր:

Ամփոփելով ԱԺ հերթական նիստի աշխատանքը, Օլեգ Եսայանը բարձր գնահատեց օրենսդիր և գործադիր մարմինների համագործակցությունը ԼՂՀ համար կարևոր նշանակություն ունեցող օրենքների մշակման և ընդունման գործում:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ստունգի դես լուրեր կլանելու ժամանակը

Ընտրություններն ավարտվեցին: Ավելի ստույգ՝ ընտրողներն ավարտեցին իրենց բաժին գործը: Մնաց ԿԸՀ-ինը: Ամենադրական բանը, որ անվերապահորեն կարելի է արձանագրել, օպերատիվ լրատվության մեխանիզմի գործարկումն էր, որ նախորդ որևէ ընտրության ժամանակ չէր իրականացվել: Առաջատարն անշուշտ եղավ «ԱԻ»-ն հեռուստաընկերությունը, որը դեռ առաջին փուլի ժամանակ շուրջօրյա դարբերականությամբ հրապարակ տեղեկատվություն ապահովելով՝ ցույց տվեց, ինչպես դեպք է աշխատել: 96-ի ընտրությունների ժամանակ ԿԸՀ-ից արդյունքների հրապարակումը զգուշորեն հեռարձակելու նպատակով ԿԸՀ-ից արդյունքների հրապարակումը զգուշորեն հեռարձակելու տխուր փորձ ունեցող դեպքական հեռուստատեսությունը 98-ի ընտրությունների առաջին փուլի ամփոփման գիշերը հետ ու հանգիստ բարի բուն մաղթեց բոլոր սպասողներին: Սակայն մարտի 30-ին բերեցս ստիպված եղավ աշխատել անհրաժեշտ ոիթմով, ինչ-որ տեղ նաև հակակշռելու «ԱԻ»-ի դիրքորոշումը: Արևմտյան լրատվության ընտրական շրջանի փորձին անձանոթներիս համար (համեմատություններ կատարելու իմաստով) դա բավականին հետաքրքիր և դրական գնահատականի արժանի աշխատանք էր: Խոսքը, իհարկե, հեռուստատեսության մասին է, որովհետև մամուլը նույն օրը արձագանքելու հնարավորություն դեռ չունի:

Ամեն ինչ այս անգամ ավելի հաշտ ու խաղաղ էր, քան առաջին անգամ: Միակ «բախումը» թեկնածուների նախընտրական շտաբների իրար հերթագայող ելույթները եղան չարաբաստիկ բողոքիկների շուրջ, որոնց տարածողներին չհաջողվեց հայտնաբերել: Ժողովրդավարական ընտրությունների օրը քարոզչությունը (ինչպես և հակաքարոզչությունը) բացվում է: Ընդամենը մի քանի տարի առաջ ձերբակալել էին դրանով զբաղված հայտնի դերասան Ռիչարդ Գիրին:

Հայաստանը, սակայն, նոր է փորձում ձևավորել ժողովրդավարական ընտրությունների մեխանիզմ: Որքանո՞վ դա կհաջողվի, դժվար է ասել, որովհետև մեր մտածելակերպի մեջ շարունակում են ամուր նստած մնալ անձնավորված մոտեցման, խմբակային սատարումի և «ամբոխը հիմար է» հոգեբանության շերտերը:

Թե՛ բողոքիկում հնչող վարկաբեկումները Ռ. Քոչարյանի հասցեին, թե՛ Աղվան Վարդանյանի մտահոգությունները Հայաստանի խոցելիության առթիվ, թե՛ Կ. Դեմիրճյանի նախընտրական շտաբի հայտարարության հիշեցումները երեսական օրենսգրքի 133² դրիմ հոդվածով 5 տարի ազատազրկման մասին այլ երկրներում հատատաղես ուրիշ արձագանք կգտնեին: Բայց մեզ մոտ ամեն բան այլ ոիթմի մեջ և մտածողության դաշտում է ճանապարհ անցնում, և մեր այսօրինակ յուրատիպությունը մի տեսակ զրահի է նման, որից ներս խմորումները ներսից՝ իր, դրսից՝ ուրիշի աչքը հանելու են նման:

Ինչպես, ընտրությունները անցյալ են, և անկախ լրատվամիջոցների թեր և դեմ մեկնաբանություններից, մենք պիտի ձգտենք հանգիստ խղճով աղրել կողք-կողքի, դարձ նայելով միմյանց աչքերին:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Ազգային

Հայոց դատի պաշտպանը՝ Բոգդան Գեմբարսկի

Այն ամենի համար, ինչ եղել է, այն ամենի, ինչ կա եւ կլինի, խոնարհվում եմ Ձեր առաջ, թանկագին Գեմբարսկի, ազնիվ ժողովրդի ազնիվ որդի:
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՒԱԿ
(14.2.65 թ. Գեմբարսկուն ուղղված նամակից)

«Ազնիվ ժողովրդի ազնիվ որդին» լեհ ժողովրդի զավակ Բոգդան Գեմբարսկին էր: Իսկ մեր մյուս մեծը՝ Հովհաննես Շիրազը, նույն հայցեաֆիրոջը հղում է. «Հայ ժողովրդի բոլոր շուրթերով, որոնք մաքուր են ինչպես միայն երկնքի աստղերը, համբուրում եմ քեզ եւ քո ազգը: Եթե գիտենայի աշխարհի բոլոր դաշտերի ծաղիկները նույնպես մաքուր են աստղերի նման, նրանցով էլ կհամբուրեի Ձեզ»:

Ո՞վ էր Գեմբարսկին, որ 60-ականների սկզբին այսպիսի անվերապահ սիրո էր արժանանում հայոց մեծերի կողմից:

...1961 թ. նոյեմբերի 20-ին Վարշավայի «Կյորուսկի» («Ուղղություններ») շաբաթաթերթում տպագրվեց Բ. Գեմբարսկու «Նամակ իմ հին թուրք ծանոթին» (կամ «բարեկամին») հոդվածը, որն արագ տարածվեց մեզանում շնորհիվ Երեւանում ապրող լեհուհի Մարիա Գրոխոլսկայայի թարգմանության:* Պարույր Սեւակը հետագայում նրան բնութագրեց «համար մեկ հայուհի» նկատի ունենալով նաեւ նրա հանառ պայքարը հայոց լեզուն անաղարտ պահելու համար:

Բոլշեւիկյան առաջադիմական նորամտությունները չարդող Գեմբարսկու հոդվածը դանդաղ գործող ականի նման փոխանցվեց տնից-տուն, ստից սիրտ, եւ սկսեց ծեւավորվել հայրենասիրական այն ալիքը, որը 65-ին արդեն վերածվեց համաժողովրդական ընդվզման ընդդեմ թուրք բարբարոս ցեղասպանների եւ հայոց դաշը ոտնահարող բոլշեւիզմի: Գեմբարսկի գրողի եւ հրապարակախոսի խոսքը խորապես համամարդկային էր, փաստացի, տրամաբանական եւ բացում էր մեր ոչ այնքան հեռավոր ու զարհուրելի պատմության անթափանց էջը. «...20-րդ դարը չի սկսվել 1901 թ. հունվարյան առաջին գիշերը, այլ միայն մի քանի տարի հետո, այսինքն 1914 թ. ամռանը, ինչպես որ 19-րդ դարը սկսվեց միայն Վաթերլոոյի ճակատամարտից հետո, 1815 թ.: Պարերների այսպիսի տեղափոխությունը բխում է այն պարզ փաստից, որ պատմության ընթացքը չի կարող ճշգրտորեն մտնել օրացուցային շրջանակների մեջ: Ամեն դար ունի իր սեպագիր դեմքը: 20-րդ դարը նախորդներից տարբերվում է նրանով, որ ամենամեծ ոճրագործությունների եւ ամենամեծ փոխհատուցումների դարն է: 20-րդ դարի ամենամեծ ոճրագործությունները մարդասպանություններն են, այսինքն՝ ամբողջ ժողովուրդների տանջանքի անելու փորձերը, որոնք, բարեբախտաբար, մինչեւ այժմ երբեք չեն պսակվել 100 տոկոսանոց հաջողությամբ:

Այդպիսի ոճրագործության առաջին փորձը, որ իրականացվեց 60 տոկոսով, կատարվեց 1915 թվականի ամառվա սկզբին, որը կոչվում էր «Հայկական հարցի վերջնական լուծում»:

Այդ «վերջնական լուծման» 3 մլն զոհվածների հետ Գեմբարսկին պատմության դեմքին է խարանում նաեւ «6 մլն չծնվածների պատկառելի թիվը»:

Աշխարհով մեկ բարձրացնելով Հայոց ցեղասպանության հարցը («Բաց նամակ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար, նորին մեծություն Ուն Թանին», «Բաց նամակ Հնդկաստանի դրեգիդենտ նորին գերազանցություն Սարվապալի Ռադհակրիշնանին», «Նամակ իմ հայ ընթերցողներին», «Երեք նամակ աշխարհի ընթերցողներին», «Շրջանի հայկական քառակուսին ունի իր լուծումը (նամակ հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին)», «Նամակ թուրք մտավորականներին», «Սիրիական անապատ»), Բոգդան Գեմբարսկին վիթխարի հասակով կանգնեց աշխարհի մեծ մարդասերների Բայրոնի ու Բարբյուսի, Նանսենի ու Վերֆելի, Ռայնհսի ու Բրյուսովի կողքին:



Լեհ ժողովրդի զավակ Բոգդան (Ալեքսանդր) Անտոնիի Գեմբարսկին ծնվել է 1905 թ. փետրվարի 27-ին Պետերբուրգում, որ եւ ապրել է որոշը: 1924 թ. մշտական բնակության է տեղափոխվել Վարշավա: Ավարտել է Վարշավայի Արեւելյան կենդանի լեզուների ինստիտուտը: 1935 թ. մշտապես դասախոսություն է կարդացել հայ գրականության (զուգահեռաբար՝ նաեւ պատմության) վերաբերյալ՝ հին օրերից մինչեւ ներկա օրերը: Եղել է երդվյալ հակաֆաշիստ: Խմբագրել է տարբեր թերթեր ու ամսագրեր: Երկար տարիներ զբաղվել է հայ եւ հնդիկ գրողների երկերի թարգմանությամբ: 1956 թ. եղել է Հայաստանում:

1961 թ. սկսած մինչեւ կյանքի վերջը զբաղվել է հայկական հարցով, հայ ժողովրդի արդար դատը բարձրացնելով միջազգային ասպարեզ: Իր հրապարակախոսական թարգմանական գործունեության հետ միաժամանակ ստեղծել է նաեւ ինքնուրույն գրականություն, որի լավագույն նմուշներից է «Մահվան դատապարտվածները» վիպակը՝ 1915 թ. Մեծ եղեռնի թեմայով, որը հայերեն լույս է տեսել Անահիտ Տեր-Ղազարյանի թարգմանությամբ:

Բ. Գեմբարսկին նամակագրական կապեր է ունեցել ինչպես սփյուռքի, այնպես էլ Հայաստանի մտավորականության մի շարք նշանավոր գործիչների հետ:

Մահացել է 1978 թվականի մարտի 20-ին եւ թաղված է Վարշավայի Բրուդնա գերեզմանոցում:

Նրա շիրիմը զարդարում է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի նվիրած մարմարե խաչքարը, որը նրա ընտանիքին է հասցրել Ստանիսլավ Լեմի «Սոլյարիս» եւ Մինկովսկու «Նաղոլեոնի ատամը» վիպակների հայերեն թարգմանիչ Մարիա Գրախոլսկայան:

1962 թ. օգոստոսին երիտասարդ գրոսաշրջիկների խմբի հետ եղա Լեհաստանում: Արդեն ծանոթ էի Գեմբարսկու «Նամակ իմ հին թուրք ծանոթին» հոդվածին: Հիմա նրա հայրենի քաղաքում եմ: Հրաշք կլիներ հանդիպելը: Եվ հաջողվեց. մեր մեկնելուց մեկ օր առաջ, օգոստոսի 28-ին: Կեսօրից հետո վերադարձել էր ծովափից. դեռ ընտանիքն այնտեղ էր ու ինքը հոգնած: Բայց հենց իմացավ, որ Հայաստանից ենք ու վաղն էլ մեկնում ենք, սիրով հրավիրեց տուն: Ես, նկարիչ Ժորա Պարոնյանը եւ բանվոր-ուսանող Սարգիս Տիգրանյանը Յանոշ Ռուդկովսկու առաջնորդությամբ (ուսանող-գիդ) հայտնվեցինք Վարշավայի Ստոլեչնո փողոցի թիվ 14 շենքի 184-րդ բնակարանում... Երբ մի քանի ժամ հետո դուրս եկանք Գեմբարսկու բնակարանից, Յանոշը արտաբերեց. «Ես հիմա հասկացա, թե ովքեր են հայերը եւ ովքեր ենք դուք»:

...Երբ թերթեց իրեն նվիրած «Մատենադարան» պատկերազարդ գիրքը, ժպտաց բարի ու ասվածային. «Այսպիսի եզակի գանձեր ստեղծած ժողովուրդն իրավունք չունի իր պատմական հայրենիքից զրկված մնալու»:

Նա հավատում էր, որ հաղթանակելու է պատմական արդարությունը. գաղութաֆիրության փլուզումն աշխարհում նրա կռվաններից մեկն էր: «Իմ նպատակն է աշխարհին ապացուցել, որ հայերն իրավունք ունեն հետ ստանալու իրենց պատմական հայրենիքի գեթ մի մասը, որին Թուրքիան տեր է դարձել բնաջնջման ամօրինի մեթոդներով...»:

Երբ նրան հրավիրեցինք Հայաստան, ասաց. «Կգամ... մի քանի տարի հետո, կգամ ձեր մեծ տունը, երբ վերադարձված կլինեն անարդար ձեւով խլված ձեր հողերը...»:

...Օտարը հավատում էր, որովհետեւ մարդ մարդ էր: Որովհետեւ բանական մարդ էր: Որովհետեւ իր հայրենիքը սիրող մարդ էր եւ ուրիշների հայրենիքը դարձնելով ֆաշիզմի ու եղեռնագործության...

Իսկ արդյո՞ք բոլոր հայերն են այդպես... մտածում:

Այս համառոտ խոսքս ավարտեմ մեծ մարդասերին հասցեագրված Մարտիրոս Սարյանի նամակից մի մեջբերումով, հուսալով, որ մեր օրերի՝ երիտասարդությունը կպատկերացնի, թե ինչ ազնիվ ակունքներից են սնվել մեր օրերի ազգային-ազատագրական շարժումները, որը հանգեցրեց Արցախի ազատագրությանը. «Մենք սիրում ենք Ձեզ, սիրում ենք, որովհետեւ դուք մասնակցեցիք մեր բախտի, մեր ճակատագրի պայքարին, պայքար, որ դեռ երկար է շարունակվելու:

Ես հիացմունքով եմ տալիս Ձեր անունը որպես մեծ մարդու, արդարամիտ լեհի, որն իրավունք ունի լեհ կոչվել հենց նրա համար, որ իրեն երբեք օտար չէ մի այլ ազգի վիշտը, դժբախտ վիճակը:

Հեռու հեռվից համբուրում եմ Ձեզ. իմ լավ, իմ քաջ լեհ բարեկամ: Դու նման ես քո հայրս, ազատասեր ժողովրդին: Ողջունում եմ քո ժողովրդին: Թող աշխարհում արդարություն լինի, այնպիսի արդարություն, ինչպիսին երազում ես դու իմ ժողովրդի համար»:

Ամեն ինչ ասված է, ասված է մեր ժողովրդի ստից՝ 1962 թ. հունիսին:

Մարտի 20-ին լրացավ մեծ լեհի մահվան 20-ամյակը. ես սարսուռով եմ հիշում նրա տանը անցկացրած ժամերը, այն պահերը, երբ ինձ նվիրեց իր լուսանկարը՝ լեհերեն մակագրությամբ, երբ ինձ տրամադրեց իր նոր հոդվածի ձեռագիրը «Բաց նամակ Հնդկաստանի դրեգիդենտ նորին գերազանցություն Սարվապալի Ռադհակրիշնանին» (որը թարգմանեց Կարլեն Ազատյանը):

ՀԱՄԼԵՏ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

(*) *Նամակն առաջին անգամ հայերեն հրատարակվել է Անդրանիկ Ծառուկյանի «Նարիր» շաբաթաթերթում, Բեյրութ: Խմբ.*

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐ

Արգենտինահայ երազողը հույս ունի դառնալու զբոսաշրջիկության թագավոր

Ամերիկյան հեղինակավոր «Ուոլ Սթրիթ Ջոռնալ» թերթի լրագրող Ջոնաթան Ֆրիդլենդը Բուենոս Այրեսից վերոհիշյալ խորագրի ներքո գրում է տեղի բնակիչ, հայազգի Էդուարդո Էռնեկյանի մասին, որը վերջին տասը տարում մոտ 1 մլրդ դոլարի հասնող հաղորդակցությունների «կայսրություն» հիմնելուց հետո այժմ երազում է դառնալ Արգենտինայի զբոսաշրջիկության թագավորը:

Հոդվածը, որն ամբողջությամբ արտատպվել է «Արմինյոն Միրոր Սփեքթեյթր» շաբաթաթերթի մարտի 7-ի համարում, եւ որը չնչին հապավումներով ներկայացնում ենք այստեղ, տալիս է հետաքրքիր տեղեկությունները մեծահարուստ երազողի մասին: Ավելացնենք, որ Էռնեկյանը մաս է կազմում «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձության:

Ամսվա սկզբներին Էռնեկյանի ղեկավարած կոնսորցիումն իրավունք է ստացել առաջիկա 30 տարիների ընթացքում կառավարելու երկրի 33 գլխավոր օդանավակայանները: Նա գնել է նաեւ «Հոուլրդ Ջոնսըն» ուտեստեղենի մեծ ընկերությունը եւ ծրագրում է այդ ընդարձակ երկիրը «համեմել» ամերիկյան ոճի հյուրանոցներով եւ մոթելներով:

«Զբոսաշրջիկությունը դառնալու է աճող բնագավառ Արգենտինայում», ասում է 65-ամյա Էռնեկյանն իր տված հազվադեպ հարցազրույցներից մեկում: Նա կարծում է, որ այսօրվա Արգենտինան շատ նման է էյզենհաուերի շրջանի Ամերիկային: Դա մի վայր է որտեղ դիրքի հասած մարդկանց համար, որոնք տարիների դժվարություններից ձերբազատվելով՝ այլեւս ցանկանում են «երկարել իրենց ոտքերը» եւ հանգիստ ապրել: «Ամերիկյան ոճի եւ որակի ծառայությունների մատուցումն ուղղակի ցնցող է լինելու», ավելացնում է նա:

Լավ է, եթե այդպես լինի, քանի որ Էռնեկյանն օդանավակայանների գնման գործում իր գործընկերների հետ մեծ պարտավորություններ է ստանձնել: Նյու Յորքում գտնվող սպասարկման ծառայությունների հսկայական Օգդեն կորպորացիայի եւ Միլանի օդանավակայանի իտալական «Ասսաերոպորտի ՍՊԱ» շահագործման ընկերության հետ համատեղ նա պարտավորվել է Արգենտինայի կառավարությանը վճարել ավելի քան 5 մլրդ դոլար եւ ոչտագայում էլ 2,2 մլրդ դոլարի հավելյալ ներդրում կատարել: Ներկայիս 33 օդանավակայաններից միայն երկուսն են շահութաբեր եւ նրանք էլ կարիք ունեն հիմնական վերանորոգման:

Էռնեկյանը խիզախ «գրավների» ասպարեզում նոր մարդ չէ: Մեկ տասնամյակ առաջ նա հստակորեն կարողացավ տեսնել, որ ժողովրդավարական կառավարության եւ ազատ շուկայական բարեկարգումների համատեղումը կարող էր Արգենտինայում առաջացնել լրատվամիջոցների մեծ շարժում: Իսկ ավելի նոր օրինակ կարող է ծառայել այն, որ Ջորջ Սորոսի (Ամերիկա) եւ Բենետոնի (Իտալիա) հետ նա առաջին ներդնողներից է, որոնք հավատում են, որ Արգենտինան նորից դառնալու է աշխարհի ամենահզոր գյուղատնտեսական պետություններից մեկը: Նա երկրի հյուսիսում գնել է հսկայական մի հողատարածք, որից ստացած բամբակի բերքը մատիր է արտահանել:

Չնայած Էռնեկյանի գործընկերները միայն գովասանքով են խոսում, կարծիքները նրա մասին Արգենտինայում, այնուամենայնիվ, բավական տարբեր են: Հայ գաղթականների զավակ լինելով՝ նա իր գործունեությունը սկսել է ընտանեկան տեխնիկ արդյունաբերությունում, որը երկրի տնտեսական անմխիթար վիճակի հետեւանքով 1980-ականներին սկսել է ճգնաժամ ապրել: Միեւնույն բնագավառի շատ այլ գործարարների նման, Էռնեկյանն իր գործարանները «ոտքի» էր պահում շնորհիվ կառավարական զարգացման բանկից վերցրած տասնյակ միլիոն դոլարի հասնող փոխառությունների, որոնք, ըստ որոշ արդյունաբերողների, նա չի վերադարձրել: Այդ թվերին իր եղբայրն ու գործընկերը նախագահ Ռաուլ Ալֆոնսինի կառավարության մեջ զբաղեցնում էր ավագ տնտեսագետի պաշտոնը: Ինքը՝ Էռնեկյանը, ժխտում է այժմ արդեն լուծարված «Բանկո նացիոնալ դե դեզարոլլոյից» պարտքով փող վերցնելու փաստը:

Էկոնոմիկայի նախարարության պաշտոնյան, որն զբաղվում էր բանկի լուծարման հարցերով, նշում է, որ չի կարող հաստատել՝ Էռնեկյանը բանկից գումար վերցրել է, թե՞ ոչ: «Գլխացավանք չեմ ցանկանում», ասում է նա: Պարզ է, սակայն, որ մինչեւ 1988 թ. ընտանեկան գործունեության վիճակը դեռ չէր բարելավվել: Առեւտրի սահմանափակումները վերանում էին եւ տեղական շուկան բառացիորեն հեղեղված էր ներմուծված էժան ապրանքներով: «Մտածում էի, թե ինչպես կարող եմ հորս նման առաջավոր դառնալ», հիշում է Էռնեկյանը, որը երբեմն ամուսնացած չի եղել եւ անհավասալիորեն երկար ժամեր է աշխատում: Հետո կանգ առա հաղորդակցական միջոցների վրա»: Այդ տարի նա ներդնումներ է կատարում համարյա սնանկացած կաբելային հեռուստատեսության մի ընկերությունում եւ գնում է մի փոքրիկ առեւտրական թերթ: Սկսում է կաբելային արտոնություններ ձեռք բերել այսպես կոչված Մեծ Բուենոս Այրեսի տարածքի համար, որի բնակչությունը հաշվում է մոտ 13 մլն: Եկամտի աճի հետ մեկտեղ նա գնում է հեռուստատեսային մի ալիք եւ մի ռադիոկայան: Նրա հիմնական տեխնիկ գործարանը հետզհետե լցվում է լրագրողներով եւ տեխնիկներով:

Այս քայլը նա կատարում է ճիշտ ժամանակին: Նախագահ Կառլոս Մենեմի ազատ շուկայական հանդուգն քաղաքականությունից եւ երկրում տիրող հարաբերական առատությունից հրապուրված ամերիկացի կաբելային օպերատորներ սկսեցին թափանցել երկիր: 1994-ին երկրի երկրորդ խոշորագույն «Կեյբլվիժը» կաբելային իր ընկերության 51 տոկոսը 350 մլն դոլարով Էռնեկյանը վաճառում է Դենվերի «Թելեկոմյունիկեյշընզ ինտերնեյշընզ ինկորպորացիային»: Անցյալ տարի նա 320 մլն դոլարի զուտ շահույթ է արձանագրել՝ վաճառելով մնացած բաժնետոմսերի մեծամասնությունը տեղական CEI Սիթիկորպ Հոլդինգզ ներդնումների հսկա ընկերությանը: Ստացած եկամուտներով Էռնեկյանն այժմ խորամուխ է եղել երկրի զբոսաշրջիկության եւ գյուղատնտեսության զարգացմանը: Բայց նա դեռեւս իր ձեռքում է պահում զանգվածային հաղորդակցության իր միջոցները՝ չնայած նրանց մեծամասնությունն այլեւս այնքան էլ եկամտաբեր չէ: Նա հավատում է, որ դրանցով կկարողանա գործարքի մեջ մտնել կառավարության հետ:

ՖՐԱՆՍԻԱ

«Հայաստան հրապարակ» Պոն դը Շերյու քաղաքում

Փարիզի «Յառաջ» օրաթերթի հաղորդման համաձայն, Ֆրանսիայի հարավ-արեւելքում գտնվող Իզեր նահանգի Պոն դը Շերյու փոքրիկ քաղաքի քաղաքապետարանի որոշումով տեղի կաթոլիկ եկեղեցուն կից հրապարակը անվանակոչվել է Հայաստանի անունով:

Թերթը նշում է, որ այդ եւ հարեւան Շարվիյո քաղաքը գաղթականության օրերին ապաստան են տվել հայերին, որոնք հաստատվելով այդ վայրերում՝ աշխատել են հիմնականում ճարտարարվեստական գործարաններում: Այժմ հայերի թիվն այնտեղ հասնում է մոտ ութ հարյուրի: Նրանք ունեն Ազգային միություն, որի նախագահն է Աշոտ Արեգյանը: Մասնագիտությամբ հաշվապահ Լեւոն Թերզյանը եղել է տեղական քաղաքապետարանի գործուն անդամներից: Շարվիյոյում է գտնվում Լիոնի Պահատուրյան ընտանիքի բարերարությամբ 1982-ին կառուցված Հայ առաքելական Ս. Նշան եկեղեցին: Եկեղեցու առջեւի փոքր հրապարակը 1982-ից ի վեր կրում է «24 ապրիլ 1915» անունը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Դասախազի զեկուցագիրը ցնցում է Թուրքիան

Սյուզուռլուքի ճանապարհային վթարը, որի մասին հաճախակի գրել ենք մեր թերթում, դասախազի մանրակրկիտ հետաքննությունը եւ ոստիկանության նախկին պաշտոնյաներից մեկի բացահայտումները մերկացնում են գաղտնի ծառայությունների, մաֆիայի եւ քաղաքական գործիչների երկարամյա սերտ կապերը:

Ամեն ինչ սկսվեց Սյուզուռլուքում, 1996 թ. նոյեմբերի 3-ի երեկոյան: Անկարա-Իզմիր մայրուղու այդ փոքր ավանի հատվածում մեծ արագությամբ սլացող զբաճաղաս «Մերսեդեսը» ամբողջ թափով բախվեց բենզակայանից դուրս եկող բեռնատարին: Զոհվեց 3 մարդ եւ բռնկվեց երկրի պատմության մեջ թերեւս ամենամեծ սկանդալը: Աղշահար թուրքերը սկսեցին բացահայտել մաֆիայի, քաղաքական գործիչների, գաղտնի ծառայությունների եւ ոստիկանության 30-ամյա վտանգավոր կապերը:

Սյուզուռլուքի վթարի երեք զոհերն են Ինստերպոլի կողմից որոնվող թմրադեղերի մի առեւտրական, ոստիկանության մի կոմիսար եւ մի ջահել կին: Միակ վերադարձողը քուրդ պատգամավոր է:

Խորհրդարանային հանձնաժողովի նախաքննությունից հետո ներկայիս վարչապետ Մեսութ Յըլմազը 1997 թ. հունիսին դասախազ Քութլու Սավասին հանձնարարեց հետաքննել գործը: Վերջինիս զեկուցագիրը, որն օրերս հանձնվեց կառավարության ղեկավարին, պայթուցիկ է: Զեկուցագրի 119 էջերը եւ հավելվածները բացահայտում են ոճրագործների կամ մահափորձերի [illegible] պատասխանատու որոշակի կախմբերի առկայությունը, որոնց մեջ կան քաղաքական ու ռազմական հետախուզական ծառայությունների գործակալներ, զորական աշխարհի ներկայացուցիչներ եւ կասկածելի գործարարներ: Զեկուցագիրը նաեւ լուսաբանում է, որ քաղաքական գործիչներից ոմանք հանդես են եկել պատվիրատուի դերում:

Տասնյակ վկաների հարցաքննած դասախազ Սավասի աշխատանքը պետք է լույս սփռեր շուրջ 2000 սպանությունների վրա, որոնք փաստորեն բոլորն էլ կապված են քրդական հարցի հետ: Նույն հրոսակախմբերը ըստ երեւույթին մահափորձեր են ձեռնարկել Ադրբեջանի եւ Վրաստանի նախագահների դեմ, ինչպես նաեւ գործողություններ իրականացրել 70-ական թթ. Թուրքիան թիրախ դարձրած հայ ահաբեկիչների ցանցերի ոչնչացման նպատակով:

Նախկին վարչապետ Թանսու Չիլլերի կուսակից երկու պատգամավորներ մեղադրվում են որոշ գործողությունների պատվիրման համար: Նրանցից մեկը Սեղաթ Բուչակը Սյուզուռլուքի զոհերից է, իսկ մյուսը նախկին ներքին գործերի նախարար Մեհմեդ Ագարն է: Վերջինս մասնավորապես կազմել էր քուրդ գործարարների սեւ ցուցակ, որոնց կասկածում էին քրդերի զինված պայքարի ֆինանսիայի բանտերում թմրադեղերի առեւտրի համար: Մեսութ Յըլմազը խոստովանում է, որ զեկուցագիրն այժմ թույլ է տալիս պնդել, որ Չաթլին եւ իր ազգայնական ընկերները Թուրքիայի պետության կողմից օգտագործվել են արտաքին գործողությունների իրականացման նպատակով, մասնավորապես հայկական ԱՍԱԼԱ-ի դեմ: Միաժամանակ նա զբաղվել է անձնական գործերով հերոինի առեւտրով եւ Թուրքիայի վերահսկողության տակ գտնվող Հյուսիսային Կիպրոսի խաղատների ու բանկերի միջոցով կեղտոտ փողերի լվացմամբ:



Քրոսսսսպորտաս սնջ.

Աջ ազատական նախարար Էյուփ Ասիկի խոսքերով, Թուրքիայի պետության կողմից ընդհատակյա հրոսակախմբերի օգտագործումը սկիզբ է առել 50-ական թթ., երբ ԱՄՆ-ը որոշել է «Թուրքիայում ՆԱՏՕ-ի երկրների նմանությամբ հիմնել հակակոմունիստական պայքարի կազմակերպություն»: 1974 թ. վարչապետ դարձած սոցիալ դեմոկրատ Բյուլենթ Էջեւիթը գաղտնի ֆոնդերի ֆինանսավորման մի խնդրագրի առիթով պատահաբար բացահայտել էր հակապարտիզանական պայքարի մի ընդհատակյա կազմակերպություն, որի կենտրոնականացումը գտնվում էր ԱՄՆ-ի ազգային օգնության առաջնության տեսնում:

Դասախազ Քութլու Սավասի զեկուցագրի համաձայն, նախկին վարչապետ Թանսու Չիլլերը նույնպես կարող է մեղադրվել առնվազն մեկ գործի Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի դեմ 1995 թ. մարտին կազմակերպված անհաջող մահափորձի առնչությամբ: Սոցիալ դեմոկրատ պատգամավոր Ֆիքրի Սաղլարն այսօր կարծում է, որ այդ մահափորձը կարող էր կազմված լինել Աֆղանստանից Ադրբեջանի տարածք թմրադեղերի տարանցման հետ:

Խոշոր գործերի մեծ մասում եւ մասնավորապես նախագահ Ալիեւի հետ կապված գործում կարելի է գտնել Աբդուլահ Չաթլիի (նկարում) անունը. թուրք ծայրահեղ աջերի այդ հայտնի ներկայացուցիչը մեղադրվել էր նաեւ պապ Հովհաննես Պողոս Բ-ի դեմ կատարված մահափորձի առնչությամբ: Չաթլին չորս տարի (1986-1990 թթ.) անցկացրել է Ֆրանսիայի բանտերում թմրադեղերի առեւտրի համար: Մեսութ Յըլմազը խոստովանում է, որ զեկուցագիրն այժմ թույլ է տալիս պնդել, որ Չաթլին եւ իր ազգայնական ընկերները Թուրքիայի պետության կողմից օգտագործվել են արտաքին գործողությունների իրականացման նպատակով, մասնավորապես հայկական ԱՍԱԼԱ-ի դեմ:

ՇՐՋԱՆ

Բարեկամ հարեւանն այսպես չի լինում

Մայիսի 28-ին Վրաստանում տոնվելու է Ադրբեջանի Հանրապետության 80-ամյակը

Մոսկովյան «Արգումենտի ի ֆակտի» շաբաթաթերթի «Թբիլիսի» ներդիրհավելվածի վերջին համարը (թիվ 13 (73), 1998) հայտնում է. «Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն ստորագրել է հատուկ կարգադրություն՝ Ադրբեջանի ժողովրդական հանրապետության 80-ամյակը Վրաստանում տոնելու մասին: Այն կկայանա այս տարվա մայիսի 28-ին: Կարգադրության համաձայն, հանդիսություններ են անցկացվելու Թբիլիսիում եւ ադրբեջանցիների համախումբ բնակության շրջաններում»: Հայտնվում է նաեւ, որ Վրաստանի նախագահի ցուցումով, վրացի քանդակագործ Գելա Ջափարիձեն կերտելու է «Օդլար Յուրդու» («Բոցերի երկիր») կոմպոզիցիան:

Վրաստանի նախագահը երեւի այսպիսով իր երախտագիտությունն է հայտնում իր 70-ամյակը շնորհավորելու համար հատկապես Թբիլիսի այցելած ու նախագահի եւ տիկնոջ դիմանկարներով ձեռագործ գորգ նվիրած Հեյդար Ալիեւին:

Անհասկանալի են մնում, սակայն մի քանի հարցեր.

1. Ինչո՞ւ Հայաստանի Հանրապետության 80-ամյակը եւս հանդիսավորապես չի նշվելու Թբիլիսիում, Ջավախքում եւ երկրի հայաբնակ մյուս շրջաններում, մանավանդ որ վրացական վիճակագրության իսկ տվյալներով, հայերն ազգային երկրորդ խումբն են վրացիներից հետո:

2. Ինչո՞ւ Ադրբեջանի «ժողովրդական» հանրապետության 80-ամյակը նշվելու է հենց մայիսի 28-ին՝ Հայաստանի Հանրապետության 80-ամյակի օրը, մինչ, ինչպես հայտնի է, Ադրբեջանի անկախությունը հռչակվել է 1918 թ. մայիսի 27-ին:

3. Հատկանշական է նաեւ ադրբեջանցիներին հանձնարարելու կոչված քանդակագործական կոմպոզիցիայի անունը՝ «Բոցերի երկիր»: Դրանով ոտնձգություն է կատարվում թե՛ հայերի, եւ թե՛ պարսիկների արժանապատվության նկատմամբ: Հիշենք, որ հայոց Վահագն աստվածը ծնվում էր բոցերի միջից, իսկ «Բոցերի երկիրը» իրանական Ատրպատականի (բուն Ադրբեջանի) բնութագիրն է:

Այս նկատողությունները հաշվի առնելով, Վրաստանի նախագահի վերոնշյալ «հատուկ կարգադրությունը», մեղմ ասած, անբարյացակամ, իսկական ու անկեղծ հարեւան-բարեկամին անտեսելու դրսեւորում է Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ:

Ավելացնենք, որ հակառակ մամուլում հանդիպած բողոք-նկատողություններին, Հայաստանում Վրաստանի դեսպանությունը իր մուտքի ցուցանակում հայերենը չի ընդգրկում, նախապատվությունը տալով անգլերենին՝ խախտելով լեզվի մասին ՀՀ օրենքը եւ ոտնահարելով մեր ժողովրդի արժանապատվությունը:

ԳԵՎՈՐԳ ՅԱՇԵՐՅԱՆ

Ալիեւը կրկնել է Կասպից ծովն աղաառազմականացնելու առաջարկությունը

ԲԱՔՈՒ, 31 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐՏԱՍ: Ադրբեջանի նախագահը կրկնել է Կասպից ծովն աղաառազմականացնելու իր առաջարկությունը Թուրքմենստանի փոխվարչապետ, արտգործնախարար Բորիս Շիխմուրադովի հետ երեկ երեկոյան այստեղ կայացած հանդիպման ժամանակ: Այդ մասին նա առաջին անգամ հայտարարել էր Բաքվում մարտի 26-ին, այստեղ հանդիպելով Ռուսաստանի արտգործնախարարի առաջին տեղակալ Բորիս Պասուխովի հետ, Կասպից ծովի կարգավիճակի խնդրի շուրջ երկկողմ կոնսուլտացիաների շրջանակներում:

Հեյդար Ալիեւը նշել է, որ այնտեղ ռազմական ուժեր պահելն իմաստ չունի, քանի որ ոչ ոք չի պատրաստվում հարձակվել ոչ մեկի վրա, եւ տարածաշրջանի բոլոր երկրները հանդես են գալիս քաղաքական ու տնտեսական համագործակցության օգտին:

Անդրադառնալով Կասպից ծովում ադրբեջանա-թուրքմենական փոխգործակցության կոնկրետ հարցերին, պետության ղեկավարը նշել է երկու երկրների ծովային գոտիները, դրանց սահմանները որոշելու կարեւորությունը, որը պետք է արվի ծովի հատակով անցնող միջին գծից հավասար հեռավորության կետերի սկզբունքի հիման վրա: Նա ինքն այդ սկզբունքը համարում է արդարացի, նշելով, որ նույնպիսի դիրք են բռնում Ռուսաստանը եւ Ղազախստանը:

Թուրքմենստանի արտգործնախարարության ղեկավարի պնդման համաձայն, նրա երկիրը եւ Ադրբեջանը ընդհանուր շատ շահեր ունեն Կասպից ծովում: «Երկու պետություններն էլ շահագրգռված են նախ եւ առաջ այն փոխադարձիքանցի արդյունավետության բարձրացմամբ, որն արդեն սաղ ծովով անցյալ տարվանից Եվրոպան Կենտրոնական Ասիայի երկրների հետ է կապել Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքմենիայի տարածքով», հայտարարել է Բորիս Շիխմուրադովը: Բացի այդ, ի տարբերություն մյուս առափնյա երկրների, նշել է նա, Թուրքմենստանն ու Ադրբեջանն արդեն մշակում են իրենց ծովային հանքավայրերը եւ ջանում են հնարավորին չափ շատ արտասահմանյան ներդրումներ ներգրավել իրենց էներգանախագծերի մեջ: Եվ վերջապես, երկու երկրներն էլ, հաղորդել է Թուրքմենստանի արտգործնախարարության ղեկավարը, միասնական մոտեցում ունեն մերձկասպյան երկրների նախագահների առաջիկա հանդիպման կազմակերպման հարցերում, որտեղ հնարավոր կլինեն ստորագրել Կոնվենցիա Կասպիականի իրավական կարգավիճակի վերաբերյալ:

Այդ փաստաթղթում, Թուրքմենստանի արտգործնախարարի կարծիքով, պետք է հստակորեն արտացոլված լինի նրանց դիրքորոշումը ծովի իրավական կարգավիճակի հիմնային պարագծերի հարցում, որոնք վերաբերում են համաձայնեցված կոորդինատների հիման վրա միջին գծի սկզբունքով նրա բաժանմանը ազգային գոտի-հատվածների, սահմանված լինի առափնյա երկրներից յուրաքանչյուրի իրավասությունը, որպեսզի ապագայում բացառվեն այդ գործով շահագրգռված բոլոր կողմերի պահանջները:

Ռուսաստանի նախագահի եկամուտը անցյալ տարի կազմել է 1950324,3 ռուբլի

ՄՈՍԿՎԱ, 30 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 1997 թվականին ՌԴ նախագահ Բորիս Ելցինի տարեկան եկամուտը կազմել է 1950324,3 վերանվանված ռուբլի, հաղորդել է պետության ղեկավարի մամլո ծառայությունը: Այն բաղկացած է միագումար աշխատավարձից, «Նախագահի գրառումներ» (1994 թվական) գրքի հոնորարներից: Տարեկան եկամուտից վճարվել են հարկեր:

Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի հաղորդման, Բորիս Ելցինն անձնական օգտագործման համար ունի 323,4 քառակուսի մետր մակերեսով բնակարան: Բնակարանում նրա եւ կնոջ հետ համատեղ ապրում է կրտսեր դստեր ընտանիքը՝ ընդամենը վեց մարդ:

Մոսկվայի մարզում Բորիս Ելցինին կնոջ՝ Նաինայի հետ համատեղ սեփականության իրավունքով պատկանում է հողամաս՝ գնված 1995 թվականին: Վերջինիս տարածությունը կազմում է 4 հեկտար: Հողամասում կառուցված է ամառանոց, որի մակերեսը 452 քառակուսի մետր է:

Որպես անձնական սեփականություն Բորիս Ելցինն ունի 1995 թվականին ձեռք բերված ԲՄՎ մակնիշի ավտոմոբիլ:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

ԱՄՆ-ի միջնորդիչ ջանքերը «լիովին ձախողվել են»

ԹԵԼ ԱՎԻՎ, 31 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իսրայելի կառավարության ղեկավար Բենիամին Նաթանյահուն ամերիկացի բանագնաց Դենիս Ռոսի Վաշինգտոն վերադառնալուց առաջ նրա հետ ունեցած եզրափակիչ հանդիպման ժամանակ մերժել է Թել Ավիվի վերահսկողության ներքո գտնվող տարածքի եւս 13 տոկոսը պաղեստինցիներին հանձնելու ԱՄՆ-ի առաջարկությունը: Ինչպես հաղորդել է ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ը, ամերիկացի միջնորդին հայտարարվել է, որ Իսրայելը չի համաձայնի զորքերի հետքաշմանը նման մասշտաբներով: Իսրայելի կոշտ դիրքորոշումը Նաթանյահուն պատճառաբանել է նրանով, որ ինքնավարության ղեկավար Յասեր Արաֆաթից այդպես էլ չի ստացվել գործողությունների հստակ պլան, որոնք վերաբերեին պաղեստինցիների ստանձնած պարտավորությունների կատարմանը, այդ թվում՝ ծայրահեղական կազմակերպությունների զինաթափման եւ ահաբեկիչներին Իսրայելին հանձնելու վերաբերյալ:

Իսրայելցի վերլուծաբանների մեծամասնությունը Ռոսի առաքելությունը գնահատում է որպես ԱՄՆ-ի միջնորդիչ ջանքերի «լիակատար ձախողում»: Նրանց կարծիքով, ԱՄՆ-ի վարչակազմի նախաձեռնությունը պատշաճանելուց Նաթանյահուի հրաժարվելը վերջինիս հնարավորություն է տալիս պահպանելու կառավարող կոալիցիայի ամբողջականությունը, բայց կարող է հանգեցնել ամերիկա-իսրայելական հարաբերությունների բարդացման:

Ռումինիայի կառավարությունը հրաժարական տվեց

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 31 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռումինիայի կառավարությունը հրաժարական է տվել: Ելույթ ունենալով ուղիղ եթերով՝ այդ մասին հայտարարել են վարչապետ Վիկտոր Չորբյան եւ նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուն: Պետության ղեկավարը հաղորդել է, որ վարչապետի նոր թեկնածուի անունը ինքը կհայտարարի հինգշաբթի օրը: Սահմանադրության համաձայն, թեկնածուն 10 օրվա ընթացքում պետք է խորհրդարանին ներկայացնի նոր կառավարության լրիվ ցուցակը եւ նրա ծրագիրը: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի հաղորդման, վարչապետի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակված պետական նախարար, ներքին գործերի նախարար Գավրիլ Դեժեուն: Տեղիս մեկնաբանների կարծիքով, նոր կառավարության կազմը կհայտարարվի 48 ժամվա ընթացքում: Վարչապետի պաշտոնի առավել հավանական թեկնածու են համարում Ազգային-ցեռնիստական, քրիստոնեական եւ ժողովրդավարական կուսակցության գլխավոր քարտուղար Ռադու Վասիլեին:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Զարմացել ու շարունակում եմ զարմանալ, երբ բանաստեղծություններ են գրում աղջիկները, կանայք, երբ հենց իրենք են երգ, բանաստեղծություն, զարմացել ու շարունակում եմ զարմանալ, երբ աղջիկները, կանայք գեղանկարներ են անում, ֆանդակում են, երաժշտություն են հորինում, երբ իրենք են գեղանկար, ֆանդակ, մեղեդի: Այ, չեմ զարմանում, երբ ասվածահաճ գործ են անում՝ սիրում են երկիր ու հող պահողին, մանուկ են ծնում, երգ են երգում, գործ են գործում...

Իմ այսօրվա «գովական» աղջիկը հասցրել է սիրո արահետ դարձնել բանաստեղծական այն կածանը, որն արդեն արմատ ունի Արմատում, կեցվածք: Գինին գինի է: «Լուսաղեմին մի թաս նորից Սերը ծոցի կենացն ասի, Որ հասկանաս իմ կարոտից Գինին թունդ է, ես ավելի»: Պիտի այտեր ունենաս, ունենաս քեզ պահած լեզու, որ իրավունք ունենաս ասելու. «Գինի, ուրիշ հեռ սեղան նստեցիր...»: Սեղան նստելը, իհարկե, լավ բան է, բայց գինու եւ կնոջ գավերն իրար շատ են նման եւ միայն ուշի գալուց հետո կարելի է ասել. «Քո համը, հոգիս, ա՜խ, չի մոռանում, Բայց դու իմ գավը հետդ ո՞չ տարար»: «Մնացիր մենակ...» երգի մեջ բանաստեղծուհին մտերմորեն ասում է. «Ես քեզ եմ խմել, դու էլ ինձ, գինի, Ո՞նց պիտի անցնենք գիշերով անդուռ»: Եվ ժողովրդական մտածողությունխտացնացություն է: Դրա համար էլ «թե փշրվի մեղր մի օր Թող ներծծվի իմ ուրտի մեջ»: Բանաստեղծուհին սիրտ ունի, նրա երգը սիրտ ունի, եւ սիրտ ունի նաեւ սիրտը, բայց ուրակեղեր ոչինչ չի ասում ու անում: Գլխավորը ապրումը կարողանալ ճիշտ արտահայտել, կարողանալ լեզու գտնել ամեն ինչի հետ, անգամ քամուն ասել. «Ու կարոտներիս մայրանի վրա Զգույշ կթողնես ավազդ տարած»: Գեղեցիկ է սերը, օ՜, թաքնվելու, ծուլվելու, աշխարհից հեռանալու պահ է: Թաքնվելու ինչքա՜ն տեղեր կան. «Թաքցրու ինձ քո անձավներում... Թաքցրու ինձ քո աչքերի մեջ... Թաքցրու ինձ քո գիշերներում», «Թաքցրու, թաքցրու ինձ քո ամբողջի մեջ, որ չզգամ ինձ էլ...»: Եվ ինչ էլ լինի, սիրո ավազան կա, կինը սիրո ավազան է, ուր պիտի մկրտվել ու... Կարող ես նաեւ ուրիշի սիրել, բայց քո մկրտարան-ավազանը էլ չի լինելու: Թող թախիծ իջնի, թող ամեն ինչ հոսքի նման լինի, միշտ չէ, որ ընթացքի ուժն ես զգում կամ խորությունը: Եթե սիրո լուսաբաց ունես, ուրեմն այն «արբունքի մեջ է»: Մի անուշ ոսանաս է հիշեցնում «Էլ, փախել է քունս այսքիս» երգը: Կարդալու ժամանակ մեղեդի է ասես բարձրանում գարնան ծորից լուսնագիշեր վալսեր, մոռացումի վալսեր, խելակորույս վալսեր, նվիրումի վալսեր... «Ճաղերի մեջ մի նժույգ էր խենթանում» բանաստեղծությունը ոչ միայն ձիուն է նվիրված, այլ մարդուն, հենց սիրող մարդուն, թե չէ ուրիշ ինչպես ընկալես ուրիշ հետ խոսող վերջաբան-տողը. «Ու ընկավ ձին շատ սիրելու կարոտից»: Բառ-պատկերներով, ապրումարարում հոգեվիճակներով հարուստ է բանաստեղծուհին: Կարելի է շատ բան ասել անգամ բանաստեղծական մի տողի մասին, թեկուզ սա. «Կարոտն է գժվում իմ մատուռներում...»: Մատուռը նաեւ թողություն ու լռություն է հուշում: «Գինով թունդ հարբած իմ գիշերը կույս Մայրացավ անխոս որձ հրացոլքից»: Հեթանոս տենչ ու ցանկություն կա բանաստեղծություններում, «Հոգեհաց» շարքում նաեւ ընծայված երգեր կան, որ զուտ անձնական դառնում են նաեւ քոնը, նոր հնչեղության հասնում:

Ինչպես այս գիրքը, այնպես էլ օրերս կարդացած անտիպ ձեռագրերը վկայում են, որ Արմավիրում մենք ունենք տաղանդավոր մի բանաստեղծուհի: Ու եթե չկարողացա խոսքս ավելի համոզիչ դարձնել, ապա մեղավորը... թերթի նեղ սյունակներն են: Ես ինչ անեմ, թերթն ինչ անի: Բայց կխնդրեի խմբագրությանը եւ ընթերցողներին, որ լավ հիշեն այս անունը Ժաննա (Կարինե) Աբրահամյան գինու նման թունդ թնդացող մի բանաստեղծուհի, որը, բարեբախտաբար, մեզ արբեցնելու է երգի իր զուլալությամբ, անխառնությամբ: Նրա առաջին «Գինին» ու ձեռագրերը միայն դա են հուշում:

ՏՐԱՅԱՆ ՄԱՅԵՐՈՍՅԱՆ

Գինու նման թունդ թնդացող մի բանաստեղծուհի

«Ազգ»ը անդրադառնում է վերջերս իր գրադարանին ընծայած Ժաննա Աբրահամյանի ժողովածուին

Դաշնակահար Լորիս Սեւհոնքյանի երկու CD-ներ

«Լորիս Սեւհոնքյանը ինքնատիպ խառնվածքի տեր դաշնակահար է, որ տասնհինգ տարի նվիրված է իր ասպարեզին», գրում է «24 ժամ» թերթը զվեյցարական շրջանակներում ծանոթ դաշնակահար Լորիս Սեւհոնքյանի մասին, որ վերջերս, ըստ Փարիզի «Յառաջ» օրաթերթի, հրապարակ է հանել երկու կոմպակտ ձայնասկավառակ (CD): Մեկը նվիրված 20-րդ դարի զվեյցարական երաժշտությանը (Ռաֆայելե դ'Ալեսանդրո, Օթմար Շեոք, Ֆրանկ Մարտեն, Ռընե Օթրոսն), իսկ երկրորդը՝ Մուսորգսկուն եւ Ալեքսանդր Բորոդինիին (Թաբլո դյուն էքսպոզիցիոն եւ Փրթիք սյուիտ-սկերզո): Երկուսն էլ դրական լայն արձագանքի են արժանացել մամուլի կողմից: Որքեր ժենտոն գնահատանքով է արտահայտվել կատարների ընտրության ինքնատիպության եւ մեկնաբանության բարձր որակի վերաբերյալ: «Յառաջը» ավելացնում է, որ Ռ. Օթրոսնի «Ռումիուս» կատրը ձոնված է հատկապես Լ. Սեւհոնքյանին եւ համարվում է «համաշխարհային առաջին» այն իմաստով, որ, երաժշտատ հատարակությանը ներկայացվում է առաջին անգամ այդ CD-ով: Իսկ Ռ. դ'Ալեսանդրոյի 24 պրելյուդների ամբողջական արձանագրությունը դարձյալ առաջին անգամ է ներկայացվում շնորհիվ Սեւհոնքյանի ջանքերի:

Հ. Ծ.

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Թլկատինցու պիեսների թատերական ընթերցումներ

Ֆրանսահայ հայտնի թատերական գործիչ Արքի Հովհաննիսյանի ղեկավարությամբ «Համազգայինի» Դիմակը եւ Հայ թատրոնի ընկերակցության խումբը իրենց թատերական ընթերցումների հինգերորդ շարքով գործնականորեն հերքել են այն թյուր համոզումը, որ Թլկատինցու թատերական գործերը հնարավոր չէ բեմադրել խարբերդի բարբառով գրված լինելու հետեւանքով: Ըստ «Յառաջ» օրաթերթի լրատվության փետրվարի 15-ին եւ մարտի 1-ին նրանք մեծ հաջողությամբ ներկայացրել են նախ Թլկատինցու (Հովհաննես Հարությունյան) «Ինչպես կնպաստենն» ու «Կրակը», իսկ այնուհետեւ «Դեպի արտասահման» եւ «Կուլիկն ու վարժարեսը» պիեսները, որոնք մոտ դար հեռավորությունից ցոլացնում են դարասկզբի խարբերդի իրականությունը: Հատկապես ուշագրավ են եղել վերջին երկուսը, որոնց նյութը դեպի արտասահման գաղթն է եղել: Թլկատինցին փաստորեն նրանց կողմից «հայտնաբերվել» է որպես «իրապաշտ եւ դրամախոսության վարպետ» հեղինակի:

Թատերական ընթերցումների նման միջոցառումները վկայում են, որ նույնիսկ բեմի եւ բեմադրության համապատասխան պայմանների չգոյության պարագաներում կարելի է, ցանկության եւ մանավանդ նվիրվածության դեպքում, ստեղծել հայրենասիրական ու հայրենապահպանման մթնոլորտ սփյուռքում: «Խմբի խաղարկության մեջ հազիվ զգալի է այլեւս ընթերցումի գործոնը, եւ մեծ աշխատանք պիտի չպահանջէ հաւանօրէն այս հանգրուանէն անցումը դէպի իսկական, լման բեմադրութեան մը», եզրակացնում է «Յառաջը»:

Հ. Ծ.

ՖՐԱՆՍԻԱ

ԳԵՂԱՐՎԵՍՏ

Ահարոն Խուդավերդյանի աշխատանքների ցուցահանդեսը Ազգային պատկերասրահում

Ահարոն Խուդավերդյանին հետաքրքրել են կերպարվեստի գրեթե բոլոր տեսակները՝ փորագրություն, գծանկարչություն, պլակաս, գրքի ձեւավորում, ֆանդակ: Այս ամենից նա նախապատվությունը տվել է թեմատիկ կոմպոզիցիոն աշխատանքներին՝ բնանկարին եւ նատյուրմորտին:

Ծնվել է Վանում, նկարիչ-ֆանդակագործ Գեւորգ Խուդավերդյանի ընտանիքում: 1915 թվականին, մեծ եղեռնի մահաբեր ալիքը մանուկ Ահարոնին ափ է հանում Ալեքսանդրապոլում, ուր նա ապաստան է գտնում ամերիկյան որբատանը:

Սովորում է Ալեքսանդրապոլի նկարչական ստուդիայում եւ ապա Երեւանի գեղարվեստի ուսումնարանի ֆանդակագործական բաժնում:

Նկարչական բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայի գեղարվեստի ինստիտուտում:

Ահարոն Խուդավերդյանն անցել է Հայրենական պատերազմի ռազմաճակատներով, իսկ զորացրվելուց հետո ստեղծել է աշխարհամարտին նվիրված փորագրությունների մի ամբողջ շարք:

30-ական թվականների կեսերից մասնակցել է հանրապետական եւ համամիութենական ցուցահանդեսների: Վախճանվել է 1966 թվականին: Նույն տարում Հայաստանի նկարչի տանը բացվել է նրա հետմահու անհատական ցուցահանդեսը:

Նկարչի գործերից մի քանիսը պահվում են Սանկտ Պետերբուրգի ռուսական թանգարանում, Հայաստանի Ազգային պատկերասրահում, Երեւանի պատմության թանգարանում:

Արվեստասերները մեկ անգամ եւս առիթ ունեն հաղորդակցվելու Ահարոն Խուդավերդյանի ինքնատիպ ստեղծագործությանը: Հայաստանի Ազգային պատկերասրահում բացվեց նկարչի անհատական ցուցահանդեսը՝ նվիրված նրա ծննդյան 90-ամյակին:

Այդ առթիվ ելույթ ունենալով՝ Ազգային պատկերասրահի փոխտնօրեն Հասմիկ Հարությունյանը, գիտաշխատողներ Նունե Թադեւոսյանը, Գենյա Առաքելյանը ըստ արժանվույն գնահատեցին հայրենի կերպարվեստում իր համեստ ավանդը ներդրած նկարչի ստեղծագործությունը:

Ցուցադրված մի քանի տասնյակ գործերն արտահայտում են նկարչի անցած ստեղծագործական ուղին: Դրանք յուղաներկ եւ գրաֆիկական աշխատանքներ են, հայ եւ ռուս գրողների գրքերի նկարազարդումներ:

Նկարչի ցուցահանդեսի մասին մեր խոսքն ուզում ենք եզրափակել տպավորությունների մասյանում այցելուներից մեկի թողած տողերով. «Ահարոն Խուդավերդյանի նկարներն ինձ

վրա մեծ տպավորություն թողեցին: Դրանք ինձ հիշեցրին հին հայկական սովորությունները: Նկարներից զգացվում է հողի շունչը, ծաղիկների բուրմունքը»:

ՏՐԱՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

Փառատոն «Դինամո» մարզադահլիճում

Հանրապետական ֆեդերացիայի գավաթի խաղարկությունը

Երեւանի «Դինամո» մարզադահլիճը հյուրընկալել էր սեղանի թենիսի մեր լավագույն վարպետներին, որոնք մասնակցեցին հանրապետության ֆեդերացիայի գավաթի խաղարկությանը:

Ծրագրված էր կայացնել Հայաստանի 1998-ի առաջնությունը, որի հիման վրա որոշվելու էին Իրանի Իսլամական Հանրապետության միջազգային մրցաշարին, ինչպես նաեւ 1998 թ.-ի ապրիլի վերջին էյնդհովենում կայանալիք Եվրոպայի առաջնությանը մասնակցող ազգային հավաքականի անդամներին:

Մրցումներն անցան խիստ լարված պայքարում: Խաղացողների տարիքը տարբերվում էր 13-ից 44 տարեկանի միջեւ... Եզրափակիչ մրցումները եւ պարգեւատրումը բավականին ջերմացրեցին մթնոլորտը, մանավանդ որ մարզադահլիճ էին եկել Եվրոպայի նախկին չեմպիոններ Բագրատ Բուռնազյանն ու Սամվել Վարդանյանը, միջազգային կարգի սպորտի վարպետ Աննա Պողոսյանը:

Տղամարդկանց անհատական մրցումներում հաղթող ճանաչվեց Դավիթ Սարգսյանը, որը 3-1 հաշվով պարտության մատնեց Արշակ Հարությունյանին: Դավիթը առաջին մրցանակներին տիրացավ նաեւ զուգախաղերում եգոր Մակինյանի հետ 2-0 հաշվով պարտության մատնելով Սուրեն Ասատրյան-Արթուր Պողոսյան զույգին: Սպա. Ալլա Շահգուլյանի հետ խառը զուգախաղերում հաղթելով Արշակ Հարությունյանն-Մարինա Սահակյան զույգին (2-1), Դավիթ Սարգսյանը դարձավ բացարձակ չեմպիոն:

Կանանց եզրափակիչում գերազանց հանդես եկավ Մարինա Սահակյանը, որը 3-0 արդյունքով հաղթեց Մարինե Բիջոյանին: Իսկ գլխավոր անակնկալը կանանց զուգախաղերում էր, երբ Ալլա Շահգուլյան-Աննա Հովակիմյան զույգը պարտության մատնեց Հայաստանի բազմակի չեմպիոն Մարինա Սահակյան-Մարինե Բիջոյան զույգին:

Մրցումներին ներկա էին ՀՀ սպորտվարչության պետ Արթուր Գեւորգյանը, հանրապետական ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Ասատրյանը ու փոխնախագահ, «Սրոմմարշ»-ի տնօրեն Լեւոն Խաչատրյանը:

Ինչպես արդեն նշել ենք, մրցումներին ներկա էր անվանի թենիսիստ, 1997 թ.-ի ափխարհի առաջնությունում Հայաստանի թիմի առաջատար Սամվել Վարդանյանը: Զինվորական ծառայության մեջ գտնվող անվանի մարզիկին ուղղեցինք հետեւյալ հարցերը.

- Սամվել, որպես ափխարհի ու Եվրոպայի առաջնությունների մասնակից, Հայաստանի նախկին չեմպիոն, ի՞նչ սպասելիներ ունես այս մրցաշրջանից, մանավանդ որ Ֆ զինվորական ծառայության ավարտին ընդամենը մի քանի ամիս է մնում:

- Այո, մի ամիս է մնացել: Մի տարի է, որ չեմ մարզվում ու չգիտեմ շարունակելո՞ւ եմ, թե՞ ոչ: Երեւի Եվրոպայի այս առաջնությանը կմասնակցեմ, նրանից հետո տեսնեմ: Ծրագրեր կան, որ դարձյալ արտասահմանում խաղայի, առայժմ ոչինչ հայտնի չէ:

- Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիայի գավաթի մրցանակաբաշխությանը գալու ենք, սպասնակցելու ենք 1998 թ.-ի Հայաստանի առաջնությանը:

- Ամեն ինչ կախված է Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիայից, տվյալ ժամանակաշրջանում ծառայությունից ինձ ազատելու հարցի լուծումից: Մի տարի է, որ փորձում են ինձ օգնել այդ հարցում, երեւի չի ստացվել... Համենայն դեպս, ես հիմա ընտանիք ու երեխա ունեմ ու չեմ կարող առաջվա նման զբաղվել միայն սեղանի թենիսով:

«Դինամո» մարզադահլիճում հանդիպեցինք նաեւ Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Ասատրյանին եւ խնդրեցինք հայտնել իր կարծիքը ինչպես մրցաշարի, այնպես էլ սեղանի թենիսի իրավիճակի մասին: Բավականին հոգնած տեսք ունեցող նախագահը, որի երկու որդիները նույնպես փայլուն հաղթեր էին գալիս մրցումներում, հետեւյալը պատասխանեց. «Ցավոք սրտի, Հայաստանի առաջնություն չկարողացանք անցկացնել, որովհետեւ նախարարությունը նյութական միջոցներ չէր տրամադրել: Շնորհակալ ենք «Դինամո»-ի տնօրինությանը, որը մարզադահլիճը անվճար էր տրամադրել մրցումների համար: Առջեւում Իրանի միջազգային մրցաշարն է ու Եվրոպայի առաջնությունը: Այնպես որ պետք է միջոցներ գտնենք արժանավոր կերպով մասնակցելու վերոհիշյալ մրցաշարերին, որոնց պատմության մեջ Հայաստանն իր տեղն է ունեցել: Չմոռանը, նախարարության շնորհակալ կարգադրությամբ կազմակերպեցինք ուսումնամարզական հավաք Ծաղկաձորում: Այժմ պետք է փորձենք կազմակերպել Հայաստանի առաջնությունը, որի հիման վրա կազմվելու են Հայաստանի ազգային հավաքականները»:

Մրցումներին ներկա էր նաեւ միջազգային կարգի սպորտի վարպետ Աննա Պողոսյանը, որն անհասկանալի պատճառներով չէր մասնակցում տեղի ունեցող մրցաշարին: Աննան հետեւյալ կերպ բացատրեց իր բացակայությունը. «Մի տարվա պայմանագիր ունեի Ֆրանսիայում, որը վերջանալուց հետո վերադարձա Հայաստան: Դեռեւս չեմ կարողացել կրկին մտնել մեծ սպորտ ստեղծված դժվարին պայմանների պատճառով: Շուտով վերսկսելու եմ մարզումներս: Առայժմ չեմ կարող ասել, թե ե՞րբ եմ սեղանի թենիս վերադառնալու: Հույս ունեմ որ այն կլինի շուտով»:

ՀԱՐՈ ՄՈՍԿՈՓՅԱՆ

Պատվո պատվանդանին են կանանց մրցումների հաղթողները

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Նախապատրաստվելով Եվրոպայի առաջնությանը

Ավարտվեց սպորտային մարմնամարզության հանրապետական առաջնությունը: Ցավոք, փոքրաթիվ էին մրցումների մասնակիցները. տղամարդկանց մրցաշարում, որն անցկացվեց Հաղարծնի մարմնամարզության դպրոցում (Ալբերտ Ազարյանի գլխավորած), հանդես եկան 30 մարզիկներ, կանանց մրցաշարում (անցկացվեց Հրանտ Շահինյանի անվան մարմնամարզության դպրոցում)՝ 20 մարզուհիներ: Ավելացնենք, որ առաջնության մասնակիցները միայն Երեւանի ու Վանաձորի ներկայացուցիչներն էին:

Տղամարդկանց մրցումների բազմամարտում հաղթեց Արման Մկրտչյանը (Ազարյանի դպրոց), որը վաստակեց 50,64 միավոր: Արմանը Հայաստանի չեմպիոնի կոչմանն արժանացավ նաեւ 1980-81 թթ. ծնված մարզիկներ:



Առանձին գործիքների վրա մրցելիս երկու հաղթանակ տարավ Գեւորգ Ղեւոնդյանը (Ազարյանի դպրոց): Նա հանրապետության չեմպիոնի կոչումը նվաճեց զուգափայտերի վրա կատարած եւ ազատ վարժություններում: Մյուս մրցաձեւերում հաղթողներ դարձան Հարություն Մերդինյանը (նժույգաթափեր), Պավել Սարգսյանը (օղակներ, Շահինյանի անվան դպրոց), Արսեն Սարգսյանը (հենացատկեր) եւ Արթուր Զաքարյանը (պտտաձող): Այս վերջին երկու մարմնամարզիկներն էլ ներկայացնում են Ազարյանի գլխավորած դպրոցը:

Կանանց մրցումներում հաղթեցին Շահինյանի անվան դպրոցի ներկայացուցիչները: Բազմամարտում Հայաստանի չեմպիոնուհու կոչումը նվաճեց Անի Աղաբալյանը՝ 33, 55 միավոր: Նա լավագույնն էր նաեւ 1983-85 թթ. ծնվածների մրցաթայրարում: Իսկ մյուս տարիքային խմբում (1986-88 թթ. ծնվածներ) հաղթեց Գայանե Փաշայանը: Անի Աղաբալյանը երկու հաղթանակ տարավ նաեւ առանձին գործիքների վրա կատարած վարժություններում: Նա առաջինն էր զուգափայտերի եւ հենացատկերի մրցումներում: Մյուս երկու մրցաձեւերում՝ ազատ եւ հավասարակշռություն գերանի վրա կատարած վարժություններում հանրապետության ուժեղագույնի կոչումը նվաճեց Արմինե Գորեյանը:

Այժմ մեր ուժեղագույն մարմնամարզիկները Երեւանում ուսումնամարզական հավաք կանցկացնեն, իսկ այնուհետեւ կմասնակցեն Սանկտ Պետերբուրգում կայանալիք Եվրոպայի առաջնությանը: Կանանց մրցաշարը կանցկացվի ապրիլի 23-26-ը, տղամարդկանցը՝ ապրիլի 30-ից մայիսի 3-ը:

ՖՈՒՏԲՈԼ

Այնքան տարբեր խաղակեսեր

Տուրի մյուս խաղերն այսպիսի արդյունքներով ավարտվեցին. «Շիրակ»-«Շիրակ-2»՝ 5-0, «Փյունիկ»-«Դվին»՝ 3-2, «Ձեմենս»-«Ղարաբաղ»՝ 3-0:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Ս
1. Շիրակ	3	3	0	0	11-0	9
2. Էրեբունի	3	3	0	0	6-0	9
3. Ցեմենս	2	2	0	0	5-0	6
4. Փյունիկ	2	1	1	0	4-3	4
5. Երեւան	3	1	0	2	4-4	3
6. Արարատ	2	1	0	1	1-2	3
7. Ղարաբաղ	3	0	1	2	1-6	1
8. Դվին	3	0	0	3	2-9	0
9. Շիրակ-2	3	0	0	3	0-10	0

Այսօր կանցկացվեն առաջնության չորրորդ տուրի հանդիպումները: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Գյումրիում կայանալիք խաղը երկու առաջատարների՝ «Շիրակի» եւ «Էրեբունի-ՀՄՄ»-ի միջեւ: Մյուս երեք զույգերն այսպիսին են՝ «Երեւան»-«Փյունիկ», «Դվին»-«Ցեմենս», «Ղարա-

Բաժինը վարում է
ՌՈԶԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ԹԱՆՐԱՄԱՐՏ

Երիտասարդական առաջնությունն ավարտվեց

Մարտի 25-30-ը Վանաձորում անցկացվեց ծանրամարտի Հայաստանի երիտասարդական առաջնությունը: Այն գերազանցեց բոլոր սպասելիքները մասնակիցների քանակի առումով. մրցումներում հանդես եկան հանրապետության 7 մարզերի 140 ծանրորդներ: Որոշ քաշային կարգերում մեր երիտասարդ ծանրորդները բավականին հուսադրող արդյունքներ ցույց տվեցին:

56 կգ քաշային կարգում հանրապետության չեմպիոնի կոչումը նվաճեց գինծառայող Երվանդ Կիրակոսյանը (Ստեփանավան), որը երկամարտում ցույց տվեց 227,5 կգ (102,5+125) արդյունք: Հաջորդ 62 կգ քաշային կարգում իր մրցակիցներին գերազանցեց Գյումրիի ներկայացուցիչ Արսյուշա Մկրտչյանը՝ 252,5 կգ (117,5+135): 69 կգ քաշային կարգում Ռադիկ Պետրոսյանը (Գյումրի) հաղթեց բավականին բարձր արդյունքով՝ 290 կգ (127,5+162,5): Երկամարտի գումարով նույնպիսի արդյունք ցույց տվեց նաեւ Վիգեն Խաչատրյանը (Երեւան), սակայն նա երկրորդ մրցանակակիր դարձավ, քանի որ սեփական քաշն ավելի էր, քան Պետրոսյանինը: Հանրապետության չեմպիոն դարձավ նաեւ վերջինիս եղբայրը Ռուդիկ Պետրոսյանը: Նա 315 կգ (145+170) արդյունքով հաղթեց 77 կգ քաշային կարգերում մրցավեճում: Հաջորդ երկու քաշային կարգերում առաջին տեղեր գրավեցին երեւանցիներ Արթուր Ֆահլաբազյանը (85 կգ), որի երկամարտի գումարը՝ 320 կգ (145+175) է, եւ Արմեն Աթոյանը (94 կգ) 310 կգ (135+175): Վերջին երկու ծանր քաշերում հաղթեցին Վանաձորի ներկայացուցիչ Վահան Հակոբյանը (մինչեւ 105 կգ) 325 կգ (150+175) եւ Գագիկ Սողոմոնյանը (105 կգ-ից բարձր) 305 կգ (135+170):

Բոլոր հաղթողներին ծանրամարտի եվրոպական ֆեդերացիայի տեխնիկական հանձնաժողովի անդամ, միջազգային կարգի մրցավար Վանդոս Ղարագյոզյանն իր կողմից մարզահագուստ նվիրեց:

Թիմային պայքարի արդյունքներն ամփոփելիս բացառիկ դեպք արձանագրվեց. Երեւանի եւ Շիրակի թիմերը 127-ական միավոր վաստակեցին եւ բաժանեցին 1-2-րդ տեղերը: Լոռու ծանրամարտիկները 3-րդն էին՝ 120 միավոր:

Հանրապետական առաջնության արդյունքներով կազմվեց հավաքական թիմ, որը նախ ուսումնամարզական հավաք կանցկացնի Ծաղկաձորի օլիմպիական մարզաբազայում, իսկ այնուհետեւ՝ Բուլգարիայի մայրաքաղաք Սոֆիայում, որտեղ մայիսի 17-26-ը կանցկացվի ափխարհի երիտասարդական առաջնությունը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

օրվա հետքով

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկրորդ փուլն անցել է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան

Արշանագրում է ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի դիտորդների պատվիրակությունը

ԵՐԵՎԱՆ, 31 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- **ԱՊՀ մասնակից պետությունների Միջխորհրդարանական վեհաժողովի դիտորդների պատվիրակությունը Հայաստանի նախագահական արտահերթ ընտրությունների վերաբերյալ մարտի 31-ին ներկայացրել է հետևյալ եզրակացությունը.**

«ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի պատվիրակությունը ժամանել է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրավերով 1998 թվականի մարտի 30-ին անցկացվող Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունների երկրորդ փուլի ընթացքին հետևելու համար: Պատվիրակության կազմում են Վ. Բուրակը՝ Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի Ներկայացուցիչների պալատի պատգամավոր, Մ. Ռախյանը՝ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, Բ. Ժուստոովը՝ Ղազախստանի Հանրապետության խորհրդարանի սենատի պատգամավոր:

Աշխատանքի ընթացքում ԱՊՀ մասնակից պետությունների Միջխորհրդարանական վեհաժողովի դիտորդների պատվիրակության անդամները եղել են Էջմիածնի, Երևանի, Աբովյանի, ինչպես նաև Արմավիրի մարզի Էջմիածնի շրջանի, Կոտայքի մարզի Աբովյանի շրջանի գյուղերի 16 ընտրական տեղամասերում, որտեղ հնարավորություն են ունեցել ազատորեն հետևել ընտրությունների ընթացքին, հանդիպել եւ զրուցել ընտրողների, հանձնաժողովի անդամների, նախագահի թեկնածուների վստահված անձանց հետ, ծանոթանալ ընտրությունների կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերին:

Դիտորդների պատվիրակության անդամներն այցելել են 8/1, 8/2, 25/1, 2/1, 2/6, 2/7, 5/1, 5/2, 11/19, 7/6, 1/23, 3/2, 6/39, 6/2, 3/24 ընտրական տեղամասերը:

Հիմնվելով իրենց դիտարկումների վրա, ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի պատվիրակությունն արձանագրում է, որ ընտրությունների երկրորդ փուլն ընթացել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ «Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունների մասին» օրենքի շրջանակներում, ժողովրդավարական մթնոլորտում, կազմակերպված, ընտրողների բավարար ակտիվությամբ, ինչը հնարավորություն ընձեռեց որոշելու հանրապետության նախագահի թեկնածության վերաբերյալ իրենց կամքի ազատ դրսեւորումը:

Ընտրությունների ընթացքին հետեւելու գործընթացում ԱՊՀ մասնակից պետությունների Միջխորհրդարանական վեհաժողովի պատվիրակության անդամները գործող օրենսդրության խախտումներ չեն գրանցել:

Միեւնույն ժամանակ, Միջխորհրդարանական վեհաժողովի պատվիրակությունը բախվել է տեխնիկական բնույթի մի շարք առանձին ընթացակարգային խախտումների (ընտրողների կուտակում սեղանների մոտ կտրոնները հանձնելիս էջմիածնի շրջանի Զվարթնոց գյուղի 2/1 տեղամասում, ընտրությունների նախապատրաստման շրջանում ընտրողների ցուցակների ծեւական ստուգումների անցկացում):

Դիտորդների կարծիքով, նշված թերությունները սկզբունքային բնույթ չեն կրում եւ չեն կարող ոչ մի կերպ ազդել ընտրությունների արդյունքների վրա, այլ միայն կարող են ինչպես Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական մարմինների, այնպես էլ ԱՊՀ մյուս պետությունների համար նյութ ծառայել վերլուծություն անելիս եւ իրենց երկրներում ժողովրդավարական փոփոխությունների անցկացման փորձ կուտակելիս:

ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի դիտորդների պատվիրակությունն արձանագրում է, որ Հայաստանի նախագահի արտահերթ ընտրությունների երկրորդ փուլն անցկացվել է ՀՀ օրենսդրությանը ճիշտ համապատասխան, առանց խախտումների եւ համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին»:

«Ղարաբաղյան կարգավորման հարցում Ռոբերտ Քոչարյանը լավագույն թեկնածուն է»

31 ՄԱՐՏ. BBC- Հայաստանի վարչապետ Ռոբերտ Քոչարյանն ըստ երեւույթին վստահ հաղթանակ տարավ նախագահական ընտրություններում՝ մրցելով կոմկուսի նախկին առաջնորդ Կարեն Դեմիրճյանի հետ: Միջազգային դիտորդների խոսքերով, ի տարբերություն առաջին փուլի, որի ընթացքում արձանագրվել էին բազմաթիվ խախտումներ, այս փուլն անցավ համարյա թե առանց միջադեպերի:

Ո՞վ է Ռոբերտ Քոչարյանը եւ ինչպիսի նախագահ կլինի նա:

Ամենից առաջ պարզ է, որ Ռոբերտ Քոչարյանն ունի շատ եւ ուժեղ կողմնակիցներ՝ զինված ուժերը, Հայաստանի ամենակազմակերպված կուսակցությունը՝ Դաշնակցությունը, ինչպես նաեւ այն ընտրողները, որոնց համար ամենակարեւոր հարցերից մեկը Լեռնային Ղարաբաղի անկախության հարցն է: Ընտրարշավի սկզբում նա իրեն դրսեւորեց որպես ոչ շատ պերճախոս հռետոր, հեռագայում, սակայն, նրա ելույթները արձագանք գտան հայկական ընտրազանգվածի մեջ: Ըստ էության, Ռոբերտ Քոչարյանը եւ նրա գլխավոր մրցակից Կարեն Դեմիրճյանը դիմում էին երկու տարբեր Հայաստանի: Դեմիրճյանը նրանց թեկնածուն էր, ովքեր ափսոսանքով են հիշում խորհրդային ժամանակաշրջանի հարաբերական բարեկեցությունը: Քոչարյանի ընտրազանգվածն ավելի լայն է, որի համար նա առաջին հերթին մարդ է, որը վարչապետի պաշտոնում դրսեւորել է իրեն որպես բանիմաց բարեփոխիչ: Քոչարյանն ընդամենը 44 տարեկան է: Մինչ Լեռնային Ղարաբաղի Ադրբեջանից անջատվելու շարժումը գլխավորելը, նա գործերի գործարանում աշխատել է որպես ինժեներ: Նա խելոք ու բավականին հանգիստ է եւ մանրամասների հանդեպ ուշադիր մարդու տպավորություն է թողնում, միեւնույն ժամանակ հանդիսանալով լուրջ եւ ուժեղ քաղաքական գործիչ, որն անշեղորեն հասնում է իր քաղաքական նպատակներին: Ամենակարեւոր հարցն այն է, թե Ռոբերտ Քոչարյանը որքանով հակված կլինի ճկունություն ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի շուրջ ընթացող վեճում: Հնարավոր է, որ նա կփորձի պահպանել առաջնավիճակը (սաստուս քվո) եւ կպահանջի զիջումներ Ադրբեջանից: Նա հատկապես պնդում է, որ Ադրբեջանն ուղղակի բանակցություններ սկսի Ղարաբաղյան կողմի հետ: Սակայն հույս է ներշնչում այն հանգամանքը, որ ցանկացած գործարք կարող է կատարվել միայն Լեռնային Ղարաբաղի համաձայնությամբ եւ Ադրբեջանն այժմ հնարավորություն ունի խոսելու Քոչարյանի հետ ուղղակիորեն չդիմելով Ղարաբաղին, դրանով իսկ պահպանելով իր դիվանագիտական դեմքը: Այնպես որ, երկարաժամկետ հեռանկարի իմաստով Քոչարյանը կարող է հանդիսանալ լավագույն թեկնածուն երկու կողմերի համար վիճելի տարածքի շուրջ վեճի կարգավորման տեսակետից:

Լոնդոնի նավթի սակարանում իջել են գները

ԼՈՆԴՈՆ, 31 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- Այսօր Լոնդոնի նավթի սակարանը մեկ բարել նավթի դիմաց գների 30 տոկոս իջեցմամբ է արձագանքել Վիեննայում նավթ արտահանող երկրների կազմակերպության անդամների ընդունած որոշումներին: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, մինչեւ առավոտյան ժամը 10-ը Լոնդոնում մեկ բարելի գինը 14,37 դոլար էր: «Օրական 1,24 միլիոն բարելով նավթի արդյունահանումը կրճատելու մասին Վիեննայում ձեռք բերված համաձայնությունները բավարար չեն, ասել է «Ռեսկո» բրոքերային ընկերության աշխատակիցը: Նավթի գների կայունացման համար պահանջվում է ավելի վճռական կրճատում՝ մինչեւ 2-2,5 միլիոն բարել»: Միաժամանակ սկսվել է նավթի խոշոր ընկերությունների բաժնետոմսերի փոխարժեքի անկում: Այսպես, զգալիորեն էժանացել են «Բրիթիշ փեթրոլեումի» բաժնետոմսերը, նվազել է «Էնթերփրայզ օյլի» արժեթղթերի փոխարժեքը: Նավթի շուկայի արտահանողների տվյալներով, արտասովոր տաք ձմռան ընթացքում կուտակված նավթի եւ մազութի համաշխարհային պաշարները այնքան մեծ են, որ արդեն դրանց պահպանման տարողությունների պակաս է զգացվում:

Պաղպաղակն ընդդեմ սթրեսի

ԲՈՍՏՈՆ, 31 ՄԱՐՏ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ- Պաղպաղակ սիրողները քաղցրավենիքի այդ տեսակին անտարբեր մարդկանցից երկու անգամ ավելի ուրախ ու երջանիկ են զգում իրենց, կարողանում են խուսափել սթրեսներից: Այս մասին տեղեկացվել է բրիտանացի հետազոտողների մարտի 26-ին հրապարակված զեկուցման մեջ: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, պաղպաղակի բաղադրիչները խթանում են գլխուղեղի քիմիական այն տարրի արտադրությունը, որը նպաստում է սթրեսի նվազեցմանը: 1997 թ. բրիտանացիները կերել են 1 մլրդ 600 մլն դոլարի պաղպաղակ:

Աշխատանքի է հրավիրում

գրելու ձիրք ունեցող ուշիմ եւ համարձակ երիտասարդների:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ 47

MEDECINS SANS FRONTIERES · BELGIUM
ԲԺԻՇԿՆԵՐ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ - ԲԵԼԳԻԱ
ВРАЧИ БЕЗ ГРАНИЦ - БЕЛЬГИЯ

VACANCY ANNOUNCEMENT

Médecins sans Frontièrs-Belgian/Greek section is currently recruiting a candidate for their project concerning reproductive health, with a stress on family planning.

Post name Co-responsible of the family planing implementation in rural area. The candidate will work in close relationship with an expatriate midwife.

The project Trough an integrated approach and with respect to the economic reality of the country, to increase the population knowledge about safe contraception, to increase its availability and to promote its proper use in order to reduce reproductive health risks and to enable the population to plan their reproduction in preventive way.

Function The job will handle most of the family planing aspects: clinical, public health and contact with MoH.

Qualification
- Preference will be given to a qualified gynaecologist, but qualified therapist, if possible with public health knowledge are also requested to apply.
- Woman: for better cultural acceptance.
- Fluent in English, both written and oral is an absolute necessity.
- Former working experience is not required.

Personal interest Interested in public health approach, Sense of initiative, Keen to give training sessions, Openminded towards new ideas, Sense of creativity, Social person, being able to listen to others

Conditions
- 1 year contract with testing period. Possibility of extension depending on the project evolution
- Salary: US $ 333 a month tax included, which corresponds to US $ 241 netto.
- Housing is provided
- 5 days work a week, with possibility to come back to Yerevan most of week-ends. Flexibility of time allocation is required
- Work place will be mainly in Noyemberian and Idjevan region

Contact person Sandrine JACQUES, for curriculum vitale collection. Preferably before 10 April 1998. MSF-B/G, Raffi Street 8a, Yerevan. Tel:228167/271046 AT&T:151146
Email: msfb@msfb.arminco.com

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:
Զանգահարել 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը 18-23

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
մեկ սենյականոց բն. Նորքի IV զանգվածում, հեռ. **64-88-85:**

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
4 սենյականոց բնակարան (Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):
Զանգահարել 72-89-83

ՏՐՎՈՒՄ է ՎԱՐՁՈՎ
2 սենյականոց բնակարան, նկուղով, քաղաքի կենտրոնում:
Զանգահարել 23-56-78

Ուզո՞ւմ եք նիհարել առանց դիետայի եւ ֆիզկուլտուրայի:
Գրանցվեք հետեւյալ հեռախոսահամարով
52-93-53
ժամը 9-18-ը

Robin Generators RGX3500

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ: ☎ 529353

հաճախակ.	մախս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 Կվտ	2.5 Կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 Կվտ	3.0 Կվտ	6.1 ժ	

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆԱՎԱՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արաքելոցաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 792. Տիրաժը՝ 3500. Ստորագրված է տպագրության՝ 31.03.1998. Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@